«ԵՐԵՎԱՆԻ ՋՈՐՋ ԴՈՒՆԱՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ Հ.154 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ

ԱՐՄԵՆ ԼԵՎՈՆԻ ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԵՐԵՎԱՆԻ Ջ. ԴՈՒՆԱՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ Հ. 154 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ 9
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 12
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ 25

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ, ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԱՅԼ ՇԱՀԱՌՈՒ -ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ 36

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ 41

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ 47

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 55

ՏՀՏ, ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 62

ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ (ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ) 70

ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՄՆԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ 80

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 86

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ 90

ԱՄՓՈՓՈՒՄ 93

ՀԱՎԵԼՎԱԾ 94

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք

ՀՀ Սահմանադրություն

Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում որպես հանրակրթության պետական քաղաքականության իրականացման դրույթներ ամրագրված է՝

1. Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք:

2. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը(Հանրակրթության մասին ՀՀ օրենք, հոդված 5).

1) հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.

2) հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին.

3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.

4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը.

5) հանրակրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրումը.

6) ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռումը.

7) անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը.

8) հանրակրթական և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեցվածությունը:

ՀՀ կառավարության 2021-2026թ.թ. ծրագրում առաջնային է դիտվում մարդկանց գիտելիքների և հմտությունների ուղղությամբ ներդրումները որպես երկրի զարգացման գրավական, ինչպես նաև նշված է, որ կրթության ոլորտում նախատեսվող աշխատանքները միտված են լինելու «քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ, մրցունակ և ապագան իր սեփական երկրում պատկերացնող քաղաքացու ձևավորմանը»:

Հանրակրթության ոլորտի կարևոր ուղղություններից է համարվում կրթության որակի բարելավմանն ուղղված տարբեր ծրագրերի իրականացումը, որի համար հիմք է հանդիսանում կրթության բովանդակության արդիականացումը և հանրակրթության պետական ու առարկայական նոր չափորոշիչների պահանջներին համապատասխան կրթության կազմակերպումը:

Հանրակրթության պետական չափորոշչի նոր պահանջներում կարևորվել են ոչ միայն գիտելիքի ձեռքբերման և հմտությունների զարգացման անհրաժեշտությունը, այլև ակտիվ դիրքորոշում և արժեքային համակարգ ունեցող ակտիվ քաղաքացու ձևավորման անհրաժեշտ պայմանների ապահովումը և համապատասխան կարողունակությունների զարգացումը:

«Կրթության զարգացման պետական ծրագիր մինչև 2030թ. օրենք» փաստաթղթում ևս նշված են առաջիկա տարիներին կրթության զարգացման ռազմավարական ուղղությունները՝ կարևորելով վերջնարդյունքներով պայմանավորված կրթության որակի ապահովման խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործողությունների իրականացումը:

Երևանի Ջ. Դունայանցի անվան հ. 154 հիմնական դպրոցի 2024-2029 թթ. զարգացման ծրագիրը մշակվել է նախորդ տարիների ծրագրերի կատարողականների, ինչպես նաև հանրակրթության ոլորտում ներկայումս իրականացվող բարեփոփոխումների հիմնական ուղղությունների հաշվառմամբ: Ծրագրի նպատակներն ու խնդիրները ձևակերպվել են՝ հիմնվելով հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կրթության բովանդակության ապահովման պահանջների վրա:

Ծրագրի կառուցվածքը ներկայացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հ.35-Ա հրամանի պահանջներին համապատասխան: Հաշվի է առնվել նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի թափուր պաշտոնի հավակնորդի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները» հրամանում ներկայացված գնահատման սանդղակի պահանջները: Յուրաքանչյուր ոլորտ ներկայացվել է առկա վիճակի վերլուծությամբ և նախորդ հինգ տարիների ընթացքում իրականացված աշխատանքների նկարագրությամբ, թվային տվյալների վերլուծությունը նպաստել է բացահայտելու հիմնախնդիրները և պլանավորելու հետագա գործողությունների առաջնահերթությունները և դրանց իրականացման վերջնարդյունքները:

Ուժեղ ու թույլ կողմերի համեմատական վերլուծության հիման վրա սահմանվել են ոլորտի զարգացման նպատակներն ու խնդիրները, նախատեսվել են դրանց իրականացման համար անհրաժեշտ գործողություններն ու ռեսուրսները(մարդկային

ներուժ, նյութատեխնիկական բազա, ֆինանսական և այլն), գործողությունների իրականացման իրատեսական ժամկետները, ակնկալվող արդյունքները՝ գնահատման չափանիշները, վերահսկողության մեխանիզմները, պատասխանատուները, ռիսկերը, ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողությունները

Զարգացման ծրագրի հիմքում հանրակրթության ոլորտի գործունեությունը կանոնակարգող օրենսդրական և նորմատիվ փաստաթղթերում ամրագրված պահանջներն են. Ստորև ներկայացված են ծրագրում օգտագործված փաստաթղթերի ցանկը՝

- « ՀՀ Սահմանադրություն»,
- «Կրթության մասին ՀՀ օրենք»,
- «Հանրակրթության մասին ՀՀ օրենք»,
- «ՀՀ Կրթության զարգացման պետական ծրագիր մինչև 2030թ» օրենքը,
- «Հանրակրթության պետական չափորոշիչ»,
- ՀՀ կառավարության 2021-2026թ,թ զարգացման ծրագիր
- «ՊՈԱԿ-ների մասին ՀՀ օրենք»,
- «ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն»,
- «Երեխայի իրավունքի մասին» ՀՀ օրենք,
- «ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ. սեպտեմբերի 22-ի «Պետական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի հունվարի 15-Ի № 16-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»№35 հրաման»,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 05 օգոստոսի 2022թ. «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները սահմանելու մասին» № 30-Ն հրամանը
- դպրոցի նախորդ ուսումնական տարիների ներքին գնահատման հաշվետվությունները, կառավարման և խորհրդակցական մարմիններում տնօրենի ներկայացրած հաշվետվությունները, նախորդ տարիների դպրոցի զարգացման ծրագրերում նախատեսված որոշ գործողություններ, որոնք ունեն շարունակական բնույթ և այլ փաստաթղթեր:

Ծրագրի նպատակն է՝

Արդի պահանջներին և կրթության բարեփոխումներին համապատասխան դպրոցի տարբեր ոլորտների զարգացման ապահովումը:

Ծրագրի խնդիրներն են

- Հաստատության շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավում, համալրում, համապատասխանեցում արդի պահանջներին,
- Ուսուցման կազմակերպման նոր մոտեցումների և տեխնոլոգիաների կիրառում, սովորողների կարողունակությունների ձևավորում,
- Ուսուցիչների մասնագիտական որակների զարգացում
- Հավասար պայմանների ապահովում կրթական տարբեր կարիքներով սովորողների համար,
- Հանրակրթական պետական չափորոշչային պահանջներին համապատասխան հիմնական դպրոցի շրջանավարտի վերջնարդյունքների ապահովումը,
- Կրթության բովանդակային բաղադրիչների ձևավորմանն ուղղված տարբեր ծրագրերի իրականացում,
- Մասնակցային մշակույթի ձևավորման, կառավարման ժողովրդավարական մոտեցումների ներդրման գործընթացների շարունակական բարելավում,
- Կրթության գործընթացի բոլոր մասնակիցների ներգրավում դպրոցի կարիքների բացահայտման և ռազմավարական ծրագրերի մշակման, իրականացման, վերահսկողության, արդյունքների գնահատման և այլ գործընթացներում,
- Կրթության որակի բարձրացում:

Ակնկալվող արդյունքները

- Դպրոցի շենքային և ենթակառուցվածքների պայմանների առավել արդյունավետ օգտագործում, կրթության առանձնահատուկ կարիքներով սովորողների համար խելամիտ հարմարեցումների առկայություն,
- Նոր տեխնոլոգիաների և համագործակցային մեթոդների կիրառման գերակայություն ուսուցման ընթացքում, էլեկտրոնային պաշարների բազայի առկայություն,
- Կրթական գործընթացներ իրականացնող համապատասխան հմտություններին տիրապետող վարչական և կարողունակություններ ունեցող ուսուցչական համակազմի առկայություն,
- Հանրակրթության պետական և առարկայական չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության կազմակերպում,
- Սովորողների՝ առարկայական չափորոշիչներին համապատասխան կրթություն ստանալու իրավունքի ապահովում,
- Կրթության որակի բարելավում, որակյալ կրթության մատչելիության ապահովում,
- Թիմային աշխատանքի կազմակերպման և պատասխանատվության ստանձման միջավայրի առկայություն,
- Որոշումներ կայացնելու մասնակցային գործելաոճի գերակայություն,
- Շնորհալի աշակերտների և մանկավարժական համակազմի ստեղծագործական ունակությունների զարգացման միջավայրի առկայություն:
- Օժտված սովորողների զարգացման համար համապատասխան պայմանների առկայություն:

ԵՐԵՎԱՆԻ Ջ. ԴՈՒՆԱՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ Հ. 154 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարության 2021-2026թ.թ. հեռանկարային ռազմավարական զարգացման ծրագրում նշված է. «Կրթության ոլորտում նախատեսվող աշխատանքները միտված են լինելու քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ, մրցունակ և ապագան իր սեփական երկրում պատկերացնող քաղաքացու ձևավորմանը: Ոլորտի զարգացումը սերտորեն կապակցվելու է պետության զարգացման ռազմավարությանը և գերակայություններին: Կրթության բոլոր մակարդակների համար առանցքային են լինելու ներառական կրթական միջավայրի ստեղծումը, կրթության բովանդակության և կրթական ծրագրերի արդիականացումը, անհրաժեշտ ենթակառուցվածքների արդիականացումն ու վերազինումը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը ուսուցման և կառավարման համակարգերում, «կրթություն-գիտություն-աշխատաշուկա» կապի ամրապնդումը»: Մեր երկրում հանրակրթությունը համարվում է գերակա ուղղություն: Հանրակրթական դպրոցը, որպես հիմնական և ամենաերկարատև կրթություն իրականացնող հաստատություն, կրթության նոր որակի առանցքային կառույց է, որով պայմանավորված է անհատի հետագա կյանքի և հասարակության հաջողությունը:

Առաքելությունը դպրոցի ապագայի մտապատկերն է: Առաջիկա տարիների համար դպրոցի առաքելության որոշման հիմքում կրթության ոլորտի գործունեությունը կանոնակարգող նորմատիվաիրավական փաստաթղթերում ամրագրված պահանջներն են, որոնց շնորհիվ նախադրյալներ են ստեղծվում մրցակցային պայմաններում ապահովելու դպրոցի հետագա զարգացումը՝ հանրակրթության քաղաքականության հետագա բարեփոխումների ուղղությամբ իրականացվող ծրագրերի առանձնահատկությունների հաշվառմամբ: Հաշվի առնելով տարբեր ռազմավարական ծրագրերում և մինչև 2030թ Կրթության զարգացման պետական ծրագրում սահմանված տեսլականի և ներկայումս հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների ուղղությունները առաջիկա հինգ տարիների համար ստորև ներկայացված է Երևանի Ջ. Դունայանցի անվան հ. 154 հիմնական դպրոցի առաքելությունը.



Դպրոցի առաքելությանը համապատասխան ըստ ոլորտների նպատակների սահմանման համար կարևորել եմ կրթության ժամանակակից այն չորս հիմնարար սկզբունքները, որոնք ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ձևակերպվել են 21-րդ դարի կրթության միջազգային հանձնաժողովի զեկույցում: Դրանք են՝

- Սովորել ապրել (կենսագործունեության սկզբունքը),
- Սովորել միասին ապրել,
- Սովորել ձեռքբերել գիտելիքներ,
- Սովորել աշխատել (կատարելագործել մասնագիտական հմտությունները, ձեռքբերել որակավորում, ինչը հնարավորություն կտա հաղթահարել տարբեր իրավիճակներ):

Սահմանված առաքելությանը և դրան համապատասխան նպատակների իրագործման առկա ներուժը

1. Շենքային և նյութատեխնիկական անհրաժեշտ բազայի առկայություն,
2. Պետբյուջեից տրամադրվող կայուն ֆինանսական միջոցների և բարեգործական ներդրումների
3. առկայություն,
4. Վճարովի ծառայությունների իրականացման համար պայմանների առկայություն,
5. Մասնակցային կառավարման և համագործակցային միջավայրի առկայություն,
6. Տարբեր ծրագրերով վերապատրաստված և բարեփոխումներ իրականացնելու հմտություններ ունեցող

մանկավարժական համակազմ,

7. Դասավանդման ժողովրդավարական, սովորողակենտրոն մեթոդներին տիրապետող ուսուցչական համակազմ,
8. Սովորողների կարիքներին համապատասխան ուսուցման կազմակերպման առանձնահատկություններին տիրապետող աշխատակազմ,
9. Կառավարման արդյունավետ ձևերի կիրառման առանձնահատկությունների իրազեկ մանկավարժական աշխատակազմ,
10. Փոխվստահության ձևավորված հարաբերությունների առկայություն,
11. Ձևավորված տարբեր խմբակների և երկարօրյա ուսուցման խմբերի գործունեության պայմաններ:
12. Դպրոցի հովանավորների կողմից ներդրումային ծրագրեր իրականացնելու պատրաստակամություն:

Հիմնախնդիրներ

- Մանկավարժական կադրերի մասնագիտական կարիքների հաշվառմամբ վերապատրաստման ծրագրերի պակաս ,
- Ուսուցչի տարակարգ ստանալու և կամավոր ատեստավորմանը մասնակցելու մոտիվացիայի պակաս,
- Նորարարական մոտեցումների ներդրման ոչ բավարար պատրաստակամություն,
- Վճարովի ծառայությունների և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու սահմանափակ պահանջարկ ,
- Նյութատեխնիկական բազայի և ուսումնական միջավայրի արդիականացում
- Կառավարման և խորհրդակցական մարմինների ոչ լիարժեք համագործակցություն,
- Պետբյուջեով տրամադրվող միջոցների ոչ բավարար լինելը
- Ուսուցչի ծանրաբեռնված աշխատանք.
- Շահառուների ոչ արդյունավետ համագործակցություն,
- Ուսուցչի մոտիվացիայի բարձրացման սահմանափակ ձևեր,
- Ներառական կրթության կազմակերպման անհրաժեշտության ոչ միանշանակ ընկալում կրթության շահառուների կողմից:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին

Հաստատության անվանումը	Ջ.Դունայանցի անվան հ.154 հիմնական դպրոց ՊՈԱԿ
Հասցեն	ՀՀ, ք. Երևան, Ֆրունզեի 4
Հարկերի թիվը	4
Պետռեգիստր	04.12.2012, վկայական՝ № 03Ա058019 20201106 գր. N 269.21002613
Շենքի տեսակը	տիպային
Մասնաշենքերի քանակը	2
Շենքի զբաղեցրած մակերեսը	***3908,4 ք.մ***
Հիմնադրման տարեթիվը	1971թ.
Վերակազմավորման տարեթիվը	18.12.2012թ., հրաման 256
Ելքերի քանակը	4
Նախագծային հզորությունը (աշակերտ)	900
Աշխատանքային ռեժիմը	Հնգօրյա, մեկ հերթով

Կազմակերպաիրավաբանական ձևը	ՊՈԱԿ
Սովորողների թիվը	860
Աշխատակիցների ընդհանուր թիվը	64
Ուսուցիչների թիվը	42
Պաշտոնական կայք	https://yerevan154.schoolsite.am/
Սոցիալական հարթակ	https://www.facebook.com/school154
Հեռախոս	37410447302
Էլ. հասցեն	school154@schools.am

Երևանի Ջ. Դունայանցի անվ. հ. 154 հիմնական դպրոցը հիմնադրվել է 1971 թվականին: Մինչ 2012թ. իրականացրել է միջնակարգ կրթության ծրագրեր: ՀՀ կառավարության որոշմամբ դպրոցը 2012թ. վերակազմավորվել է հիմնական դպրոց ուսումնական հատատության: 2019թ. դպրոցն անվանակոչվել է ԱՄՆ-ի Հայաստանի Զարգացման Ծառայություններ ընկերության (DSA) նախագահ՝ մեծ հայասեր և հայրենասեր Ջորջ Դունայանցի անվամբ:

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 19.11.2012թ., իրավաբանական անձանց պետ. ռեգիստրում գրանցվել է 04.12.2012թ., վկայական № 03Ա058019: Անվանակոչությունից հետո վերագրանցվել է 11.06.2020թ. վկայական՝ N269.210.02613: Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 31.05.2006թ. № 438 Ա/Ք և 16.07.2013թ. № 963 Ա/Ք հրամանների (լիցենզիայի իրավունք) դպրոցը իրականացնում է հետևյալ կրթական ծրագրերը.

- տարրական ընդհանուր կրթություն – 450 սահմանային տեղով
- հիմնական ընդհանուր կրթություն – 450 սահմանային տեղով

Ուսուցման գործընթացը հիմնականում կազմակերպվում է կաբինետային համակարգով: Ուսուցանվող օտար լեզուներն են ռուսաց լեզուն, ֆրանսերենն ու անգլերենը:

Դպրոցը հիմնադրման օրվանից համալրված է եղել մասնագիտական բարձր որակներ ունեցող, փորձառու մանկավարժներով: Շրջանավարտներից շատերը իրենց ներդրումն են ունեցել հանրապետության տարբեր ոլորտների զարգացման գործում, զբաղեցրել տարբեր պաշտոններ:

Մանկավարժական համակազմի և խորհրդակցական մարմինների կողմից հաճախ են կազմակերպվում բազմաբովանդակ արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներ, որոնք նպաստում են սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը,կարողունակություններիզարգացմանը, դաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Սովորողների նախասիրություններին համապատասխան գործում է 8 խմբակ. 2023-2024 ուսումնական տարում սովորողների ընդգրկվածությունը խմբակներում կազմել է 7%(62 աշակերտ):

N	Խմբակի անվանումը
1.	Տրամաբանական խաղեր
2.	Բնության հմայքները
3.	Վարք, վարվեցողություն
4.	Թատերական արվեստ
5.	Տրամաբանությունը և տիեզերական մաթեմատիկան մեր առօրյայում
6.	Մեդիագրագիտություն

7.	Պարային ծաղկեփունջ
8.	Ձեռքի գնդակ

Գործող քառաձայն երգչախումբը պարբերաբար մասնակցում է մրցույթների, հանդես գալիս կրթամշակութային միջոցառումների տարբեր հարթակներում: Դպրոցում գործում է երկարօրյա ուսուցման 8 խումբ. Ընդգրկված աշակերտների թիվը՝ 52 : Ներառական կրթություն է իրականացվում ԿԱՊԿ ունեցող հինգ սովորողի համար: Ներկայումս դպրոցում աշխատում են երկար տարիների մանկավարժական փորձ ունեցող ուսուցիչներ, որոնք իրենց գիտելիքներն ու հմտությունները փոխանցում են սկսնակ ուսուցիչներին: Տարակարգ ունի երեք ուսուցիչ: Կամավոր ատեստավորմանը մասնակցել է հինգ ուսուցիչ:

Իմ գործունեությունը նպատակաուղղվելու է դպրոցի տարիների ընթացքում ունեցած ձեռքբերումների և ավանդույթների պահպանմանն ու հետագա զարգացման ապահովմանը:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Դպրոցի շենքային պայմանները հիմնականում համապատասխանում են ուսուցման կազմակերպման արդի պահանջների չափանիշներին, թեև հարկ է նշել, որ աշակերտների թվաքանակի օրեցօր ավելացումը նոր կցակառույցի հրատապ լուծում է պահանջում: Ուսումնական և օժանդակ տարածքներում յուրաքանչյուր տարի իրականացվում են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ պետական բյուջեի միջոցների և դպրոցի բարերարների ներդրումների հաշվին: Դպրոցի տարածքը բարեկարգված է և պարսպապատված՝ սովորողների անվտանգությունն ապահովելու համար(դպրոցը գտնվում է Շենգավիթ վարչական տարածքի եռանկյունի բանուկ թաղամասում): Աղյուսակում ներկայացված է դպրոցի շենքային պայմանների վերաբերյալ տեղեկությունը:

Անվանումը	Քանակը	Զբաղեցրած տարածքը	վիճակը
Մասնաշենքերի քանակը	2	0,5849 (հա)	Բավարար, վերանորոգված
Հարկերի թիվը	Առաջին մասնաշենք 4 հարկ Երկրորդ մասնաշենք՝ 1 հարկ՝ տեղակայված է ֆիզկուլտուրայի դահլիճը, հանդերձարանները		Բավարար

Նկուղային հարկ	Շենքի տարածքով	787,4 ք.մ	Վերանորոգման և բարեկարգման անհրաժեշտություն որպես ապաստարան օգտագործելու նպատակով
Կաթսայատուն	1	22.8 ք. մ	Բավարար
Առարկայական կաբինետներ	37	30ք.մ-55 ք. մ	Բավարար
Աշխատասենյակ	4	16ք.մ- 35ք. մ	Բավարար
Երկարօրյա պարապմունքների դասասենյակ	1	33. 6ք. մ	Բավարար
Գրադարան՝ ընթերցասրահի հարմարեցված պայմաններով	1	51 ք.մ	Բավարար
Մարզահրապարակ	1	300 ք. մ	Վերանորոգման անհրաժեշտություն
Համակարգչային սենյակ	1	66 ք.մ	բավարար
Հանդիսությունների դահլիճ	1	250ք. մ	Վերնորոգված և գույքով համալրված
Արհեստանոց	2	61ք. մ, և 51ք. մ	Բավարար
Ֆիզկուլտուրայի դահլիճ	1	180. 2ք. մ	Բավարար
Հանդերձարաններ	2	20. 7ք.մ և 23. 8ք. մ.	Բավարար
Բուֆետ	1	81 ք.մ	Վերանորոգված, գույքով, ՏՀՏ միջոցներով համալրված
Բուժկետ	1	16,2 ք.մ	Անհրաժեշտ միջոցներով ապահովված է
Սանհանգույց	8	6-ը՝ 16.5 ք.մ, 2-ը՝8ք.մ	Վերանորոգված

ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ 2018-2023թ.թ.

ՈԼՈՐՏԸ	ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ
Շենքային պայմանները	2018թ. վերանորոգվել է դպրոցի տանիքը և գլխավոր մուտքի դռները	Դպրոցի հովանավորների միջոցներ
	2018թ.վերանորոգվել է հանդիսությունների դահլիճը	Դպրոցի հովանավորների միջոցներ
	2018-2023թ. վերանորոգվել են բոլոր դասասենյակները	Պետական բյուջե
	2023թ..Վերանորոգվել է բուֆետի տարածքը	Դպրոցի հովանավորների միջոցներ
	2019թ. Վերանորոգվել են դպրոցի աստիճանները, փոխվել են աստիճանավանդակները	Դպրոցի հովանավորների միջոցներ
	2020թ. վերանորոգվել են ջեռուցման ցանցը, ֆիզկուլտուրայի դահլիճի տանիքը և հատակը	Պետական բյուջե հովանավորների միջոցներ
	2021թ. իրականացվել է ուսումնական տարածքների ընթացիկ վերանորոգման աշխատանքներ	Պետական բյուջե
	2022թ.-վերանորոգվել են ֆիզկուլտուրայի դահլիճի հանդերձարանները	Պետական բյուջե

	2023թ. – Վերանորոգվել են աշխատասենյակները	Պետական բյուջե
Նյութատեխնիկական բազայի համալրում	2018թ.– ձեռք է բերվել 1 հեռուստացույց, գույք, 5 համակարգիչ(դյուրակիր) և այլ ՏՀՏ միջոցներ	Պետական բյուջե
	2019թ.- ձեռք է բերվել 1 համակարգիչ և սարքավորումներ, գույք	Պետական բյուջե
	2019թ. հանդիսությունների դահլիճը համալրվել է նոր գույքով	Դպրոցի հովանավորների միջոցներ
	2020թ.—ձեռք է բերվել ջեռուցման համակարգի միջոցներ, գույք, 1 դյուրակիր համակարգիչ, շերտավարագույրներ	Պետական բյուջե հովանավորների միջոցներ
	2021թ.—ձեռք է բերվել բուֆետի համար անհրաժեշտ սարքեր, գույք, շերտավարագույրներ	Պետական բյուջե
	2022թ.- ձեռք է բերվել գույք(աշակերտական և մանկավարժական)	Պետական բյուջե
	2023թ. — ձեռք է բերվել գույք(աշակերտական և մանկավարժական)	Պետական բյուջե

Դասասենյակների, կաբինետների և մյուս տարածքների նյութատեխնիկական բազան պարբերաբար համալրվել է նյութերով, ուսումնադիտակտիկ պարագաներով և այլ միջոցներով: Պետական միջոցների հաշվին ձեռք է բերվել կաբինետների համար անհրաժեշտ գույք և սարքավորումներ: Հետագա տարիներին կարևորում եմ ուսումնանյութական բազայի, լաբորատորիաների արդիականացման ուղղությամբ նախատեսվող գործողություններին և դպրոցի շենքային պայմանների բարելավմանն ուղղված տարբեր ծրագրերի, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կարիքների համապատասխան հարմարեցումների, անհրաժեշտ տեխնիկական միջոցների ապահովման գործընթացներին աջակցելը, դպրոցի հիմնանորոգման գործընթացների իրականացմանը նպաստելը, վարչատնտեսական համակարգողին այդ ուղղությամբ բարելավմանն անհրաժեշտ առաջարկների ներկայացումը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
1. Բարեկարգված և վերանորոգված տիպային դպրոցական շենքի պայմաններ 2.Սովորողների համար անվտանգ ուսումնական տարածքներ 3.Դպրոցի տարածքը ցանկապատված է 4.Ջեռուցման համակարգի առկայություն 5.Մշտական ջրամատակարարմամբ ապահովվածություն 6. Դասասենյակների, կաբինետների և այլ տարածքների համապատասխան գույքով ապահովվածություն 7. Գրադարան -ընթերցասրահի, բուֆետի, բուժկետի առկայություն 8.Մարզադահլիճի, մարզահրապարակի, հանդիսությունների սրահի և այլ օժանդակ տարածքների առկայություն 9. Ուսումնական տեսանյութերի, ֆիլմերի դիտման նպատակով տեսասրահի առկայություն, 10.Սարքավորումներով ապահոված արհեստանոցների պայմաններ, 11.Վերանորոգված սանհանգույցներ, 12 Ժամանակակից ՏՀՏ միջոցներով(համակարգիչներ, այդ թվում՝ դյուրակիր, էլեկտրոնային գրատախտակներ, պրոյեկտորներ և այլն) որոշ ապահովվածություն և այլն	▪ Մարզահրապարակի վերանորոգման անհրաժեշտություն ▪ Դպրոցի մասնաշենքերի կապիտալ վերանորոգման անհրաժեշտություն(վերջին անգամ հինանորոգվել է 1971թ. ▪ ՏՀՏ արդի միջոցներով համալրման կարիք ▪ Դպրոցի տարածքում հանգստի գոտու բացակայություն ▪ Համակարգչային ևս մեկ դասասենյակ ունենալու անհրաժետություն ▪ Ուսումնադիդակտիկ պարագաների և միջոցների արդիականացման անհրաժեշտություն ▪ ԿԱՊԿ ունեցող սովորողների պայմանների բարելավման կարիք ▪ Գրադարանի թվայնացման ծրագրերի բացակայություն ▪ Ընթերցասրահի տարածքի ընդլայնման և գույքով համալրման անհրաժեշտություն ▪ Էլեկտրոնային հրաձգարանի պայմանների բացակայություն ▪ Նկուղային հարկի անբարեկարգ վիճակ, ▪ Լինգաֆոնային կաբինետի ստեղծման անհրաժեշտություն ▪ Շենքային պայմանների բարելավման(ընդարձակամ) կարիք ▪ Մարզադահլիճի հանդերձարաննորում լվացարանների տեղադրման անհրաժեշտություն ▪ Դպրոցի բակային տարածքում հանգստյան գոտի ունենալու անհրաժեշտություն

Դպրոցի շենքային պայմանների բարելավմանն ու նյութատեխնիկական բազայի արդիականացման նպատակները, խնդիրները, ռիսկերը, ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողություններ

Նպատակ

Ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավում, հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովմանը նպաստող նյութատեխնկական բազայի համալրում

Խնդիրներ

1.Հաստատության շենքային պայմանների ընդլայնում և օժանդակ տարածքների բարեկարգում,
2. Նոր տեխնոլոգիաների ձեռքբերում, ուսումնական գործընթացի արդիականացում

Ռիսկեր

- Լրացուցիչ միջոցների բացակայություն
- Դոնոր և հովանավորող կազմակերպությունների ներդրումային ծրագրերի բացակայություն
- Դպրոցի կարիքների և անհրաժեշտ ծրագրերի մասին իրազեկման միջոցների բացակայություն

Ռիսկերը ազդեցությունը մեղմող գործողություններ

- Արդյունավետ կառավարել ֆինանսական միջոցները, ջանքեր գործադրել խնայողություններ ունենալու ուղղությամբ, բյուջեի նախահաշվի հոդվածներով նախատեսված միջոցները օգտագործել նպատակային Կազմակերպել վճարովի կրթական ծառայություններ
- Լիարժեք տեղեկատվության ապահովման նպատակով տարբեր միջոցների օգտագործում

Գործողություններ	Արդյունքների գնահատման չափանիշ	Պատասխանատու	Ժամկետ	Անհրաժեշտ միջոցներ	Ֆինանսական միջոցներ	Վերահսկողության մեխանիզմներ
Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանման հետ քննարկել դպրոցի կցակառույց ունենալու անհրաժեշտության հարցը	Շենքային պայմանների բարելավում	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող	2024թ.	Նախագծային փաստաթղթեր,նախահաշվային և	Պետական բյուջե Հովանավորչական ֆինանսական միջոցներ	Մշտադիտարկում, Ներքին գնահատման հաշվետվություններ, վարչատնտեսական համակարգողի հաշվետվություն
Մարզահրապարակի վերանորոգում և բարեկարգում	Սպորտային առողջարարական ծրագրերի իրականացման պայմանների առկայություն, համայնքային ակտիվ դպրոցի սկզբունքների կիրառում	Վարչատնտեսական համակարգող	2024-2026թ.թ	Շինարարական նյութեր մարզագույք	Պետական բյուջե Հովանավորչական ֆինանսական միջոցներ	Մշտադիտարկում, Ներքին գնահատման Վարչատնտեսական համակարգողի հաշվետվություններ,

Ընթերցասրահի տարածքի ավելացում ՏՀՏ միջոցների և գույքի ձեռքբերում	Սովորողների և համայնքի համար հարմարավետ պայմաններ, 1 սմարթ գրատախտակի, 1 լուսացրիչի, դյուակիր 1 համակարգչի առկայություն	Վարչատնտեսական համակարգող, ուսումնաօժանդակ անձնակազմ	2024-2029թ.թ	Շինարարական նյութեր, գույք համակարգիչներ, ինտերակտիվ գրատախտակ, գույք	Պետական բյուջե Հովանավորչական միջոցներ	Մշտադիտարկում, Ներքին գնահատման հաշվետվություններ, վարչատնտեսական համակարգողի հաշվետվություն
Գրքային ֆոնդի թվայնացում	Գրքային ֆոդի օգտագործման մատչելիության առկայություն	Տնօրենություն, վարչատնտեսական համակարգող, գրադարանավար,	2024թ-2025թ.	Թվայնացման ծրագրեր, համապատասխան մասնագետներ	Պետական բյուջե	Մշտադիտարկում, Ներքին գնահատման հաշվետվություններ, Տնօրենի և վարչատնտեսական համակարգողի հաշվետվություններ
Էլեկտրոնային հրաձգարանի ստեղծում	ՆԶՊ առարկայի դասավանդման գործնական պարապմունքների պայմանների առկայություն	Վարչատնտեսական համակարգող,	2025-2026թ.թ.	Համապատասխան գույք, ՏՀՏ միջոցներ	Պետական բյուջե	Մշտադիտարկում Ներքին գնահատման, վարչատնտեսական համակարգողի հաշվետվություններ
Ուսումնական և օժանդակ տարածքների վերանորոգումների իրականացում՝ ըստ առաջնահերթության	Տարեկան առնվազն 3 դասասենյակի, 1 լաբորատորիայի վերանորոգում	Վարչատնտեսական համակարգող	2024-2029թթ.	Վերանորոգում իրականացնելու համապատասխան նյութեր	Պետական բյուջե	Մշտադիտարկում Ներքին գնահատման, և ֆինանսական հաշվետվություններ
Նկուղային հարկի վերանորոգում (787.4քառ.մ) և ապաստարանի պայմանների ապահովում	Համապատասխան պայմաններով ապաստարանի առկայություն	Վարչատնտեսական համակարգող	2024թ.	Շինարարական նյութեր, գույք, աշխատուժ	Պետական բյուջե, վճարովի ծառայություններից առաջացած միջոցներ	Մշտադիտարկում, Ներքին գնահատման, և ֆինանսական հաշվետվություններ

Արհեստանոցների գույքի համալրում և նորացում	Սովորողների հմտությունների զարգացման լիարժեք պայմանների ապահովում	Վարչատնտեսական համակարգող, ,	2024-2029թ.թ.	Ուսումնադիդակտիկ նյութեր, տեխնիկական միջոցներ	Պետական բյուջե	Մշտադիտարկում, Ներքին գնահատման, Վարչատնտեսական համակարգողի հաշվետվություններ
ԿԱՊԿ ունեցող սովորողների համար խելամիտ հարմարեցումների ապահովում(հարմարեցված սանհանգույց, անհատական տեխնիկական միջոցներ)	Հավասար պայմանների առկայություն բոլոր սովորողների համար, առնվազն մեկ թեքհարթակի այլ միջոցներով ապահովածություն	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, մասնագետներ	2024-2029թթ.	Շինարարական նյութեր , աշխատուժ և այլ միջոցներ,	Պետական բյուջե	Մշտադիտարկում Ներքին գնահատման, ուսումնադաստիա-րակչական աշ-խատանքների, տնօրենի և համակարգողի հաշվետվություններ
Համակարգչային ևս մեկ կաբինետի ստեղծում և կահավորում	ՏՀՏ հմտությունների բարելավում՝ Յուրաքանչյուր տարի առնվազն հինգ համակարգչի ձեռքբերում	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող	2024-2027թ.թ.	Համակարգիչներ, այդ թվում՝ դյուրակիր համակարգիչներ, ինտերակտիվ գրատախտակ, լուսացրիչ, գույք և այլ միջոցներ	Պետական բյուջե, հովանավորչական միջոցներ	Մշտադիտարկում Ներքին գնահատման, ուսումնադաստիա-րակչական աշխատանքների, համակարգողի հաշվետվություններ
Լաբորատոր սարքավորումների և նյութերի ձեռքբերում	Սովորողների կարողունակություն ների և հմտությունների ձևավորման պայմանների առկայություն: 2-3 տարվա ընթացքում Ֆիզիկայի և քիմիայի արդիականացված լաբորատորիայի կահավորում	Տնօրենություն, վարչատնտեսական համակարգող, բնագիտական մեթոդմիավորման նախագահներ, բնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչներ	2024-2029թթ.	Գործնական պարապմունքների համար անհրաժեշտ սարքեր և այլ պայմաններ(նյութեր, քարշիչ պահարան, լաբորատոր սեղաններ և այլն)	Պետակ բյուջե, վճարովի ծառայություններից և վարձակալական տարածքների միջոցներ	Մշտադիտարկում Ներքին գնահատման, ուսումնադաստիա-րակչական աշ-խատանքների, համակարգողի հաշվետվություններ

	սարքավորումներով համալրում					
Մարզադահլիճի հանդերձարաններում լվացարանների տեղադրում	Ուսումնական միջավայրի բարելավում	Վարչատնտեսական համակարգող	2024-202026թ.թ.	Համապատասխան շինարարական միջոցներ, գույք	Հովանավորչական ֆինանսական միջոցներ	Մշտադիտարկում Ներքին գնահատման, ուսումնադաստիա-րակչական աշ-խատանքների, համակարգողի հաշվետվություններ
Լինգաֆոնային կաբինետի ստեղծում	Լեզուների ուսուցման բարելավված պայմանների ապահովում	Տնօրենություն, վարչատնտեսական համակարգող,մեթոդ միավորումներ դասավանդող ուսուցիչներ	2024-2029թթ.	Կահավորման գույք, սարքավորումներ, ՏՀՏ և այլ միջոցներ	Պետական բյուջե	Մշտադիտարկում Ներքին գնահատման, ուսումնադաստիա-րակչական աշխատանքների,վարչ ատնտեսական համակարգողի հաշվետվություններ

ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության հիմքում դպրոցի զարգացումն ապահովելու պայմաններին աջակցելն է: Համագործակցությունը այն հենքն է, որի վրա կառուցվում են այս մարմինների կանոնադրություններով սահմանված գործառույթները: Վերջիններս ներկայացված են Հանրակրթության մասին ՀՀ օրենքում և հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրության մեջ: Հանրակրթության մասին ՀՀ օրենքում նշված է <<Դպրոցի տնօրենը խրախուսում է մասնակցային կառավարումն ուսումնական հաստատության մարմիններում>>: Գործունեությանս ընթացքում կարևոր եմ համարում կառավարման և խորհրդակցական մարմինների հետ համագործակցության ապահովումը, դպրոցի առջև ծառացած խնդիրները համատեղ հաղթահարելուն ուղղված ծրագրերի մշակումը և ջանքերի գործադրման համագործակցային միջավայրի ձևավորումը:

Հաստատության կառավարման խորհուրդ

Կառավարման խորհուրդը ընտրվել է երեք տարի ժամկետով, անվանական կազմը հաստատվել Երևանի քաղաքապետի հրամանով 2021թ.(անվանական կազմը ներկայացված է հավելվածում) : Իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվել է դպրոցի կանոնադրությամբ նախատեսված գործառույթների ապահովման պահանջներով: Ըստ աշխատակարգի առնվազն երեք ամիսը մեկ անգամ հրավիրված նիստերի ընթացքում քննարկվել օրակարգային հարցեր:

Խորհրդի անդամները մասնակցել են դպրոցի բյուջեի պլանավորման, ներքին գնահատման իրականացման գործընթացներում: Խորհուրդը իրականացրել է դպրոցի զարգացման ծրագրի նկատմամբ վերահսկողություն և աջակցել նախատեսված գործողությունների իրականացմանը, տնօրենի ներկայացմամբ հաստատել է դպրոցի կառուցվածքը և ներքին կարգապահական կանոնները, ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգը և այլն: Տնօրենը խորհրդին է ներկայացրել

տեղեկատվություն մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, երկարօրյա խմբերի կազմակերպման աշխատանքների վերաբերյալ:

Խորհրդի կողմից իր աշխատակարգով նախատեսված նիստերի ընթացքում քննարկվել են տնօրենի ներկայացրած դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը, հաստիքացուցակի, բյուջեի նախահաշվի, տարիֆիկացիայի նախագծերը: Տնօրենը խորհրդի նիստերի ընթացքում հանդես է եկել դպրոցի գործունեության վերլուծությունը ներկայացնող ներքին գնահատման, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և այլ հաշվետվություններով:

Դպրոցում գործող խորհրդակցական մարմինները և մեթոդմիավորումները ներկայացված են ստորև.



Խորհրդակցական մարմինները դպրոցի կանոնադրությամբ իրենց վերապահված պահանջներին համապատասխան սահմանված ժամկետներում հրավիրում են նիստեր, քննարկում դպրոցի գործունեության, կրթության որակի, ուսուցման և ուսումնառության բարելավմանն ուղղված հարցեր և այլ : Հաստատությունում որոշումների ընդունման մեջ ներգրավված են խորհրդակցական մարմինները, որի արդյունքում ձևավորվել է բոլոր շահառուների կողմից պատասխանատվության ստանձնում վերջնարդյունքների նկատմամբ: Համագործակցային մշակույթի գերակայության շնորհիվ հաշվի են առնվում

կրթության գործընթացի բոլոր մասնակիցների ներդրման անհրաժեշտությունը և մասնակցությունը հաստատության կառավարման գործընթացներին(դպրոցի կարիքների ճշտում, զարգացման ուղղությունների, նպատակների խնդիրների սահմանում, պլանավորում, ռեսուրսների կառավարում, արդյունքների գնահատում, ներքին գնահատում և այլն):

Մանկավարժական խորհուրդ

Համաձայն դպրոցի կանոնադրության բոլոր մանկավարժական աշխատողները մանկավարժական խորհրդի անդամներ են: Խորհրդի անդամների անվանական կազմը հաստատվում է դպրոցի տնօրենի հրամանով, որի անդամներից երկու ներկայացուցիչ առաջադրվում է կառավարման խորհրդի կազմում: Դպրոցի կանոնադրությամբ սահմանված լիազորություններին համապատասխան մանավարժական խորհրդի նիստերում քննարկվել են հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման, սովորողների կյանքի և առողջության պահպանման, ԿԱՊԿ ունեցող սովորողների կարիքներին համապատասխան ԱՈՒՊ-ի իրականացման, ուսուցման բովանդակության, ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, արտադասարանական խմբակների, ուսումնական կաբինետների ձևավորման,առարկայական չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների և ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր:

Մեթոդմիավորումներ

Ձևավորված առարկայական մեթոդմիավորումները ըստ ուսումնական տարվա տարեկան պլանի իրականացնում են տարբեր միջոցառումներ, որոնք նպաստում են կրթության որակի բարելավմանը, հանրակրթության պետական և առարկայական չափորոշիրների ներդրմանը, ուսուցիչների դասարանի կառավարման և դասապրոցեսի իրականացման արդի պահանջների ապահովմանը, նոր ծրագրերի դասագրքերի փորձարկմանը, անհրաժեշտության դեպքում ներկայացնում են բարելավվումներին ուղղված առաջարկներ: Մեթոդմիավորումների կողմից կազմակերպվող վարպետության, բաց

դասերը, առարկայական շաբաթների, փոխադարձ դասալսումները և ուսուցչի ինքնագնահատման և փոխադարձ գնահատման ձևերի կիրառումը հնարավոր է դարձրել բացահայտելու ուսուցչի մասնագիտական կարիքները : 2023-2024 ուսումնական տարվանից նոր չափորոշիչներով ուսումնառության կազմակերպումը 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում արդյունավետ կազմակերպելու համար կարևորվում է բոլոր դասավանդող ուսուցիչների համագործակցությունը և համատեղ ուսումնական նյութերի ստեղծման անհրաժեշտությունը, մասնագիտական զարգացման տարբեր ծրագրերի, մեթոդմիավորումների նախագահների վերապատրաստումների իրականացումը:

2023-2024 ուստարում մ/մ-ները իրենց աշխատանքները պլանավորել և իրագործել են այլ ձևաչափով, քանի որ նոր չափորոշիչը պահանջում է առարկայակենտրոն մոտեցումներից անցում ինտեգրված մոտեցման, հատկապես ՝ փոխկապակցված թեմաների դեպքում:

Իսկ ձևավորող գնահատումը նպաստում է ոչ միայն գնահատել աշակերտի ուսումնական առաջընթացը, այլև՝ դասավանդման ընթացքում ուսուցչի կողմից հետագա բարելավումների ծրագրերի մշակմանը:

Այս և մնացած բոլոր՝ նախագծային ուսուցման, երկարօրյա խմբակների նպատակային և վերջնարդյունքի հասնելու կենտրոնում մ/մ-ի արդյունավետ աշխատանքի ռազմավարությունն է: Մ/մ-ները գիտակցում և ամրագրում են, որ ներդպրոցական վերահսկողության իրականացումը իրենց աշխատանքի մեծ չափաբաժինն է:

Իմ մտապատկերում՝ մ/մ աշխատանքը երբեք չպետք է սահմանափակվի կանոնադրության դրույթներով, կամ արձանագրությունների ամրագրմամբ: Նոր չափորոշիչների պահանջներին համապատասխան ուսումնառության կազմակերպման գործում ուսուցիչների մասնագիտական առաջընթացի ապահովման գործում կարևորում եմ մեթոդմիավորումների գործունեության արդյունավետության բարձրացումը:

Աշակերտական խորհուրդ

Աշակերտական խորհուրդն ունի 26 անդամ: Որպես աշակերտական ինքնավարության խորհրդակցական մարմին գործունեությունը իրականացնում է իր կազմից ձևավորված յոթ հանձնախմբերի միջոցով: Դրանք են՝

- Ուսումնադաստիարակչական
- Տեղեկատվական
- Սոցիալ-առողջապահական
- Մշակութային
- Կարգապահական
- Իրավապաշտպան
- Սպորտի և ռազմամարզական

Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս տարբեր առաջարկություններով, նպաստում դպրոցի ներքին կարգապահական կանոնների ձևակերպման և սահմանված պահանջների իրագործմանը: Նշանակալի դերակատարում ունի տարբեր միջոցառումների, հանդիպումների ճանաչողական այցերի, հայրենագիտական արշավների կազմակերպման գործում, որը ակտիվ լուսաբանվում է սոցիալական ցանցերում և դպրոցի կայքէջերում:

Դպրոցի տնօրենության կողմից պարբերաբար կազմակեպված հանդիպումներն ու քննարկումները նպաստում են աշակերտական խորհրդի կողմից ներկայացված առաջարկների և ծրագրերի իրականացմանը: Աշակերտական խորհրդի անդամները իրենց մասնակցությունն են ունենում դպրոցի տարեկան ներքին գնահատման գործընթացներին: Յուրաքանչյուր տարի աշակերտական խորհուրդը կազմակերպում է արդեն ավանդույթ դարձած «Ի՞նչ կանեի, եթե ես լինեի հաստատության տնօրեն» և «Ինչպիսի՞ն կցանկանայի տեսնել իմ դպրոցը» շարադրությունների մրցույթ: Դրանցից լավագույնները ներկայացվել են տնօրենին՝ խրախուսական մրցանակի արժանացնելու նպատակով, իսկ աշակերտների կողմից ներկայացված ցանկությունների և առաջարկների զգալի մասը ներառվում է դպրոցի ռազմավարական ծրագրերում և ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանում: Աշակերտական խորհրդի նախագահը դպրոցի կանոնադրության համաձայն մասնակցում է կառավարման և մանկավարժական խորհրդի նիստերին: Աշակերտական խորհուրդի անդամները հաճախ են ներկայացնում արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներ կազմակերպելու առաջարկներ՝ հանդես գալով առաջնորդի և կազմակերպչի դերում: Հպարտությամբ են կրում «Աշակերտական խորհուրդ» տարբերանշանը: Թիմային աշխատանքը ձևավորված հանձնախմբերում ակնառու է: «Շտապ

օգնության» «Ուսումնադաստիարակչական» հանձնախմբերը նպաստում են նաև երկարօրյա պարապմունքների կազմակերպմանը: Աշակերտական խորհուրդի անդամները շտապ օգնության խմբերում ընդգրկում են չառաջադիմող աշակերտներին՝ օգնում նրանց դասապատրաստման գործընթացում:

Տեղեկատվական հանձնախումբը սովորողների շրջանում պարբերաբար կազմակերպում է բանավեճ, քննարկումներ «Իմ իրավունքները» թեմայով անց է կացնում տարբեր միջացառումներ և իրազեկման սեմինարներ:

Նախատեսում եմ ավելի խրախուսել նախաձեռնությունները շարունակական և նպատակային դարձնելու համար:

Դասղեկների խորհուրդ

Դասղեկների խորհուրդը իր գործունեության ընթացքում իրականացնում է սովորողների արժեքային համակարգի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքներ, ապահովում դպրոց – ծնող կապը և հաստատության կանոնադրությամբ դասղեկներին վերապահված գործառույթների իրականացման նպատակով մշակում համատեղ ծրագրեր, նպաստում դասարանի ղեկավարների հմտությունների բարելավման ու փորձի փոխանակմանը, դաստիարակության հարցերում դասավանդող ուսուցիչներին աջակցման աշխատանքների իրականացմանը, խոչնդոտները համատեղ հաղթահարելու մարտավարության մշակմանը: Դասղեկների խորհուրդը դպրոցական ենթակառուցվածքների մի մասն է: Կարծում եմ, որ ծնող-ուսուցիչ-դասղեկ կապի բարելավումը ևս պետք է նպաստի սովորողների կարողունակությունների ձևավորմանը և հիմնական դպրոցի շրջանավարտի վերջնարդյունքների ապահովմանը:

Ծնողական խորհուրդ

Դպրոցի կանոնադրության համաձայն ծնողական խորհուրդը ձևավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: 2023-2024 ուսումնական տարում դպրոցի ծնողական խորհուրդը կազմված է 29 անդամից: Ծնողական խորհրդը հաշվետու ժամանակաշրջանում նպաստել է դպրոց-ծնող՝ ընտանիք կապի ամրապնդմանը, դպրոցի տնօրենի կամ

մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացրել սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների կատարման գործում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ: Ծնողական խորհուրդը չպետք է սահմանափակվի ամրագրված լիազորություններով, հակառակ դեպքում պլանավորված շատ հարցեր կմնան միայն թղթի վրա:

Գտնում եմ, որ առաջնահերթություն պետք է համարել այն, որ ծնողական խորհուրդը գիտակցի, որ դպրոցի վարկանիշը, իր և սովորողների հաջողությունը կախված է նաև ծնողներից: Դպրոցի տնօրենությունը կարողացել է համայնքում ջերմ մթնոլորտ և հաստատուն կարծիք ձևավորել կրթօջախի մասին: Նախատեսում եմ, որ յուրաքանչյուր օր, ցանկացած դասաժամին ծնողը՝ որպես կրթության գործընթացի մասնակից, կարող է ներկա լինել դասապրոցեսին: Դասալսումը հնարավորություն կտա ծնողին ավելի լավ ճանաչելու իր երեխայի կարողությունները, վերլուծի իր դիտարկումները, որի շնորհիվ կնպաստի միասնական մոտեցումների ձևավորմանը: Նպատակահարմար եմ համարում նաև ունենալ ծնողի դիտարկման մատյան, որը կօգնի տնօրինությանը, դասղեկին և ուսուցչին մշակելու հետագա բարելավումների ծրագրեր: Ըստ դպրոցի կանոնադրության ծնողական խորհուրդը որոշակի գործառույթներ ունի առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում դպրոցին աջակցելու, ծնողներին սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ներգրավման, ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու աշխատանքներին մասնակցության և տարբեր միջոցառումների կազմակերպման, դպրոցի գործունեության ներքին գնահատման իրականացման և այլ հարցերում: Նախատեսում եմ հետագայում ձևավորել «Ծնողավարում» ակումբ, որը հնարավորություն կտա ծնողների շրջանում իրականացնելու տեղեկատվական սեմինարներ, խորհրդատվություններ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂ ՄԵՐ

▪ Կառավարման և խորհրդակցական մարմինների կողմից իրենց գործառույթների մասին իրազեկ-վածություն, ▪ Կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության իրականացում դպրոցի կանանադրությամբ սահմանված լիազորություններին համապատասխան ▪ Դպրոցի տնօրենության հետ համագործակցելու պատրաստակամություն, ▪ Մանկավարժական խորհրդի նիստերում քննարկումների կազմակերպման ձևավորված մշակույթ, ▪ Մեթոդմիավորումների՝ կրթության որակի բարձրացմանն ուղղված գործողությունների պլանի առկայություն, ▪ Մեթոդմիավորումների կողմից պլանավորված գործընթացների հետևողական իրանացում՝ մասնագետների ներուժի օգտագործմամբ, ▪ Դպրոց-ծնող կապի և համագործակցության առկայություն ▪ Աշակերտական խորհրդի անդամների մասնակցություն դպրոցի կյանքին ▪ Ծնողական խորհրդի մասնակցություն ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին ▪ Մասնակցություն նախարարության, Երևանի քաղաքապետարանի, Շենգավիթ վարչական շրջանի կազմակերպած միջոցառումներին	▪ հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդների ձևավորման անհրաժեշտություն, որոնց գործունեությունը կարող է նպաստել դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացմանը, ֆինանսական միջոցների ապահովմանը, ▪ կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցության բարելավման կարիք, ▪ թույլ է բոլոր ծնողների ներգրավվածությունը դպրոցի կարիքների բացահայտման և լուծման հարցերում: ▪ աշակերտական խորհրդի բոլոր անդամների կողմից դպրոցի գործունեության բարելավմանն ուղված առաջարկություններ ներկայացնելու պատրաստակամության պակաս, ▪ դպրոցի գործունեության և կարիքների ոչ լիարժեք լուսաբանում, ▪ մեթոդմիավորումների ներուժի ոչ լիարժեք իրացում, ▪ ծնողավարության տարբեր մոդելների կիրառման բացակայություն ▪ խորհրդակցական մարմինների ղեկավարների համար արդի պահանջներին համապատասխան համակարգված վերապատրաստման ծրագրերի բացակայություն:

Կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության բարելավման նպատակները, խնդիրները, ռիսկերը, ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողություններ

Նպատակ

Կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացում, համագործակցության խթանում

Խնդիրներ

1. Կառավարման և խորհրդակցական մարմինների ներուժի լիարժեք օգտագործման պայմանների ստեղծում
2. Կառավարման և խոհրդակցական մարմինների մոտիվացիայի բարելավմանն ուղված միջավայրի ձևավորում
3. Շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդների ձևավորում

Ռիսկեր

- Մասնակցային մշակույթի բացակայություն
- Կառավարման նոր մոդելի կիրառման խոչընդոտներ

Ռիսկերը ազդեցությունը մեղմող գործողություններ

- Դպրոցի գործունեության հրապարակայնության ապահովում
- Լավագույն առաջարկների և նախաձեռնությունների համար խրախուսական մրցանակների սահմանում
- «Ծնողավարում» ակումբի ստեղծում
- Սեմինարների, կլոր սեղանների կազմակերպում, դպրոցի գործունեության լուսաբանում

Գործողություններ	Արդյունքների գնահատման չափանիշ	Պատասխանատու	Ժամկետ	Անհրաժեշտ միջոցներ	Ֆինանսական միջոցներ	Վերահսկման մեխանիզմներ
Ուսումնասիրել տարբեր դպրոցների կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության փորձը	Կառավարման և Խորհրդակցական մարմինների լավագույն փորձի ներդնում	Տնօրեն, խորհրդակցական մարմիններ	2024-2029թ.թ.	Ինտերնետային էլեկտրոնային պաշարներ, քննարկումների հարթակ	Ֆինանսական միջոցներ չի պահանջվում	Մշտադիտարկում, տնօրենի, ներքին գնահատման հաշվետվություններ, կառավարման և խորհրդակցական մարմինների հաշվետվություններ, նիստերի արձանագրություններ

Կազմակերպել կառավարման և խորհրդակցական մարմինների համատեղ հանդիպումներ, քննարկումներ, հանդիպումներ, սեմինարներ	Կրթության որակի և համագործակցության միջավայրի բարելա-վում	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, կառավարման և խորհրդակցակ ան մարմինների ղեկավարներ	2024-2029թ.թ.	ՏՀՏ միջոցներ, մրցույթների կազմակերպմ ան չափանիշներ, հեռավար քննարկումնե րի կազմակերպմ ան հարթակներ	Ֆինանսական միջոցներ չի պահանջվում	Մշտադիտարկում Տնօրենի, ներքին գնահատ-ման հաշվետվություններ, խորհրդակցական մար-մինների հաշվետվություններ, նիստերի արձանագրութ-յուններ
Կազմակերպել «Տարվա լավագույն մեթոդմիավորում» «Աշակերտական և ծնողական խորհուրդների լավագույն նախաձեռնություն»,՝«Տարվա լավագույն դասղեկ» մրցույթները,՝	Նախաձեռնությունն ե ր ի խթանում, մոտիվացիայի բարձրացում	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, աշակերտական , խորհրդակցակ ան մարմինների ղեկավարներ	2024-2029թ.թ. Յուրաքանչյու ր ուսումնա-կան տարում մեկ անգամ	Մրցույթների կազմակերպմ ան լուսաբանում դպրոցի կայքէջում. մրցանակների անվանակարգ երի մշակված չափանիշներ	Պետական բյուջե	Մշտադիտարկում, Տնօրենի, տնօրենի տեղա-կալների, խորհրդակցական մարմինների հաշվետվու-թյուններ
Նույն կրթական ծրագրեր իրականացնող դպրոցների Խորհրդակցական մարմինների համատեղ քննարկումների կազմակերպում	Կրթության որակի բարելավում, համագործակցային միջավայրի առկայություն, փորձի փոխանակման արդյունավետության բարձրացում	Դպրոցների տնօրեններ, տնօրենների տեղակալներ, Մեթոդմիավորո ւմների նախագահներ	2024-2029թ.թ. Ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ	Պայմաններ համատեղ քննարկումնե ր ի համար, ՏՀՏ միջոցներ	Ֆինանսավորու մ չի պահանջվում	Մշտադիտարկում, Տնօրենի, ներքին գնահատ-ման հաշվետվություններ խորհրդակցական մարմինների հաշվետվու-թյուններ, նիստերի արձա-նագրություններ
Ծնողավարման տարբեր մոդելների ուսումնասիրում, լավագույն փորձի ներդնում, Ծնողավարման ակումբի ստեղ-ծում	Ծնողների հետ աշխատանքների արդյունավետության բարձրացում, համագործակցության բարելավում,	Տնօրենություն, դասղեկներ , ծնողական խորհուրդ	2024թ.	Գրականությո ւն,ինտերնե-տային նյութեր	Պետական բյուջե	Մշտադիտարկում Տնօրենի, տնօրենի մասնա-գիտական աջակցությունն-ների գծով տեղակալի, ներքին գնահատման, խորհրդակցական

	ծնողավարման ակումբի ստեղծում					մարմինների հաշվետվություններ, նիստերի արձանագրություններ
Շրջանավարտների համախմբման միջոցառումների իրականացում Շրջանավարտների խորհրդի ձևավորում	Շրջանավարտների ներգրավում արտադասարանական միջոցառումների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերում	Տնօրենություն, մանկավարժական համակազմ, դասղեկներ	2024-2029թ.	Հանդիպումների, միջոցառումների կազմակերպման տարածքներ(դասասենյակներ, դահլիճ և այլն)	Ֆինանսավորում չի պահանջվում	Մշտադիտարկում տնօրենության և դասղեկների, խորհրտդակցական մարմինների հաշվետվություններ
7-9-րդ դասարանների սովորողների շրջանում կազմակերպել «Ի՞նչ կփոխեմ դպրոցում, եթե ես լինեմ տնօրեն » թեմայով շարադրությունների մրցույթ	Մասնագիտացված աջակցությունների գծով տեղակալ աշակերտական խորհուրդ, դասղեկներ	Սովորողների մոտիվացիայի բարձրացում	2024-2029թ.թ. Ուս. տարվա ընթացքում մեկ անգամ	Խրախուսական մրցանակներ, մրցութային հանձնախումբ	Պետական բյուջե	Մշտադիտարկում տնօրենության և դասղեկների, աշակերտական խորհրդի, ներքին գնահատման հաշվետվություններ
Տարբեր մասնագիտական ոլորտներում աշխատող շրջանավարտների հետ հանդիպումների կազմակերպում	Սովորողների շրջանում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների բարելավում	Տնօրենություն, մանկավարժական համակազմ, դասղեկներ, խորհրդակցական մարմիններ	2024-2029թ	Հանդիպումների և միջոցառումների կազմակերպման տարածքներ(դասասենյակներ, դահլիճ և այլ)	Ֆինասավորում չի պահանջվում	Մշտադիտարկում - Տնօրենության և դասղեկների, խորհրդակցական մարմինների հաշվետվություններ
Կառավարման և խորհրդակցական մարմինների ղեկավարների համար վերապատրաստումների կազմակերպում	Կառավարման, խորհրդակցական մարմինների ղեկավարների կանոնադրական պահանջների իրազեկում	Տնօրեն, կառավարման, խորհրդակցական մարմինների նածխագահներ	2025թ.	Կզնակ հիմնադրամի մասնագետներ, Տեղեկատվական նյութեր, ՏՀՏ և այլ միջոցներ	Պետական բյուջե	Տնօրենի և խորհրդակցական մարմինների, ներքին գնահատման հաշվետվություններ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ, ԵՎ ԱՅԼ ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Դպրոցի գործունեության արդյունավետության բարելավման, ինչպես նաև նպատակների իրականացման և առաջադրված խնդիրների լուծման ընթացքում խոչընդոտների հաղթահարման գործում կարևորվում է համագործակցությունը կրթության պետական կառավարման, լիազորված մարմնի(Երևանի քաղաքապետարան), վարչական շրջանի(Շենգավիթ վարչական շրջան), կրթական ծրագրեր իրականացնող տարբեր կազմակերպությունների և հիմնարկների, բարեգործական ծրագրեր իրականացնող հաստատությունների հետ: Էական է նաև ծնողական համայնքի հետ կանոնակարգված համագործակցությունը կրթության պահանջարկի կարիքների գնահատման և դրան համապատասխան կրթական ծառայությունների մատուցման ուղղությունների որոշման հարցում: Ռազմավարական ուղղությունների որոշման հարցում որոշակի ազդեցություն ունի տարբեր մարմինների հետ համատեղ քննարկումների կազմակերպումը, շահառուների շրջանում հարցումների իրականացումը և արդյունքների վերլուծության հիման վրա հետագա ծրագրերի մշակումը: Ծրագրերի վերջնարդյունքների համար ընդհանուր պատասխանատվության ստանձնումը և դրանց նկատմամբ վերահսկողությունը նպաստում են մասնակցային կառավարման գործելաոճի մշակույթի ձևավորմանը, ուսուցման արդյունավետության և կրթության որակի բարձրացմանը: Ծնողական համայնքի ներկայացուցիչները հնարավորություն ունեն մասնակցելու նաև դասավանդման գործընթացներին, որպես կրթության գործընթացի մասնակիցներ, հանդես գալու կրթության որակի և ուսումնական միջավայրի բարելավմանն ուղղված տարբեր առաջարկներով: Կրթության առանձնահատուկ կարիքներով սովորողների անհատական պլանը ևս մշակվում է ծնողների ակտիվ մասնակցությամբ , որի ընթացքում կարևոր է քննարկել սովորողի ուժեղ և թույլ կողմերի առանձնահատկությունները, ներգրավել ծնողին բոլոր այն գործընթացներում, որոնք կօգնեն հասնել հաջողությունների: Կարծում եմ, որ կրթության առանձնահատուկ պայմանների

կարիք ունեցող սովորողի ծնողի մասնակցությունը կարևոր երաշխիք է անվստահության պատկերացումների հաղթահարման , աջակցության և համագործակցության ապահովման առումով:

Դպրոցի գործունեության հաշվետվողականությունն ու թափանցիկությունը ապահովելու նպատակով տնօրենը ծնողական ընդհանուր ժողովում հանդես է գալիս ուսումնադաստիարակչական աշխատանքների և ներքին գնահատման հաշվետվությունների ներկայացմամբ: Դպրոցի կառավարման խորհրդի կազմում ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատած խորհրդի ձևավորման կարգի նեգրավված են կրթության պետական կառավարման, Երևանի քաղաքապետարանի, մանկավարժական և ծնողական խորհրդի ներկայացուցիչներ: Ծնողական համայնքի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա ձևավորվել են սովորողների նախասիրություններին համապատասխան մի շարք խմբակներ, երկարօրյա ուսուցման խմբեր:

Երևանի քաղաքապետարանի և Շենգավիթ վարչական շրջանի հետ համագործակցության շրջանակներում դպրոցի աշխատակազմն ու սովորողները մասնակցում են տարբեր ավանդույթի նշանակություն ունեցող սպորտային , մշակութային և համաքաղաքային միջոցառումների(համաքաղաղաքային շաբաթօրյակներ, սպարտակիադաներ, ծառատունկ, մշակութային միջոցառումներ և այլն):

ԿԳՄՍ նախարարության և Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների հետ հաճախ են քննարկվում կրթության ոլորտը կարգավորող փաստաթղթերի նախագծեր: Երևանի քաղաքապետարանի և վարչական տարածքի աշխատակազմի ներկայացուցիչները իրենց մասնակցությունն ունեն կրթության քաղաքականության իրականացման և աջակցման գործում:

Դպրոցը համագործակցում է նախադպրոցական հաստատությունների, հիմնական, ավագ դպրոցների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, Գնահատման և թեստավորման, Կրթական տեխնոլոգիաների կենտրոնների, ԿԶՆԱԿ -ի, Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների, գրադարանների, կրթամշակութային տարբեր կառույցների, ՆԳ նախարարության-ի և այլ կազմակերպությունների հետ(համագործակցող կազմակերպությունների ցանկը տրված է հավելվածում):

Իմ գործունեության կարևոր ուղղություններից եմ համարում աշխատանքներ տանել միջազգային, բարեգործական և կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության ապահովման ուղղությամբ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Մասնակցություն ՀՀ ԿԳՄՍ նախարարության և Երևանի քաղաքապետարանի կազմակերպած քննարկումներին • Մանկավարժական կադրերի մասնագիտական կարողությունների զարգացման և հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների ներդրման նպատակով համագործակցության առկայություն ԿԶՆԱԿ հիմնադրամի,ԿՏԱԿ-ի և այլ վերապատրաստող կազմա-կերպությունների հետ, • Համագործակցություն վարչական շրջանի նախադպրո-ցական հաստատությունների հետ • Համագործակցություն Շենգավիթ վարչական շրջանի աշխատակազմի հետ • Համագործակցություն Շենգավիթի վարչական շրջանի հ.18, 32 գրադարանների և այլ արտադպրոցական հաստատությունների հետ, • Համագործակցություն Երևանի հիմնական, ավագ դպրոցների, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններ հետ, • Դպրոցի պայմանների բարելավման հարցերում հեռանկարային համագործակցություն ԱՄՆ-ի Հայաստանի զարգացման ծառայություններ (DSA) բարեգործական ընկերության հետ: • Ծնողական համայնքի կողմից կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցման գործում աջակցություն • ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման գործընթացներում ծնողների մասնակցություն • Կրթության պետական կառավարման մարմնի, Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների և կրթության գործընթացի մասնակիցների ներգրավում	1.Կրթական ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ սահմանափակ համագործակցություն 2. Միջազգային կառույցների կողմից առաջարկվող կրթական ծրագրերի իրականացման մրցույթների հրավերների պակաս 3. Ծնողական համայնքի որոշ անդամների անտարբերություն 4. Շենգավիթ վարչական շրջանի ստորաբաժանումների կողմից աջակցության ծրագրերին պասիվ ներգրավածություն 5. «Արմաթ»ինժեներական լաբորատորիայի հետ համագործակցության բացակայություն

հանրակրթական ծրագրերի իրականացման և արդյունավետության գնահատմանը: • Դպրոցի մասնակցությունը վարչական շրջանի կողմից կազմակերպվող տարբեր նախաձեռնություններին և միջոցառումներին:	

Դպրոցի, համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության բարելավման նպատակները, խնդիրները, ռիսկերը, ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողությունները

Նպատակ

Համագործակցության հեռանկարային ծրագրերի իրականացում, համագործակցության արդյունավետության բարելավում

Խնդիրներ

1. Դպրոցի առաջընթացն ապահովող դրամաշնորհային մրցույթներին մասնակցության ծրագրերի մշակում,
2. Երկարաժամկետ համագործակցության ռազմավարության մշակում տարբեր կառույցների հետ,
3. Դպրոցի գործունեության լուսաբանում և կարիքների ներկայացում տարբեր էլեկտրոնային և սոցիալական հարթակներում, դպրոցի կայքէջում,

Ռիսկեր

1. Շահառուների պասիվ դիրքորոշում և անտարբերություն
2. Դրամաշնորհային ծրագրերին դիմելու նախաձեռնության բացակայություն

Ռիսկերը ազդեցությունը մեղմող գործողություններ

1. Իրականացնել համանքի հետ համագործակցության արդյունավետության գնահատում և վերլուծություն
2. .Դպրոցի գործունեության և կարիքների մասին ամփոփ տեղեկագրի պատրաստում

Գործողություններ	Արդյունքների գնահատման չափանիշ	Պատասխանատու	Ժամկետ	Անհրաժեշտ միջոցներ	Ֆինանսական միջոցներ	Վերահսկման մեխանիզմներ

Վարչական շրջանի աշխատակազմի հետ մշակել կրթամշակութային, սպորտային և այլ միջոցառումներ իրականացնելու ծրագրեր	Վարչական շրջանի հետ համագործակցության բարելավում	Տնօրեն, մասնագիտական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ	2024-2029թ.թ	ՏՀՏ միջոցներ, ինտերնետային ռեսուրսներ	Ֆինանսական միջոցներ չի պահանջվում	Մշտադիտարկում Ուսումնադաստիարակչական աշխատանք-ների, մասնագիտական աջակցությունների գծով տեղակալի դասղեկների և ներքին գնահատման հաշվետվություններ
«Արմաթ» ինժեներական լաբորատորիայի հետ համագործակցության պլանի մշակում, ռոբոտաշինության խմբակի գործունեության պայմանների ապահովում	Սովորողների հմտությունների և կարողունակությունների բարելավում	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող	2024-2026թ.թ.	Սարքավորումներ, ուսումնադիդակտիկ նյութեր, գույք և այլ միջոցներ	Պետական բյուջե	Մշտադիտարկում Տնօրենի, վարչատնտեսական համակարգողի, ներքին գնահատման հաշվետվություններ
Դպրոցի գործունեության մասին տեղեկատվական գրքույկի պատրաստում և տրամադրում շահառու կազմակերպություններին	Դպրոցի գործունեության և կարիքների մասին տեղեկատվության ապահովում	Տնօրենություն, կառավարման և խորհրդակցական մարմիններ	2024թ.	Տեղեկատվական նյութեր, ինտերնետային պաշարներ	Պետական բյուջե	Մշտադիտարկում Տնօրենի Ուսումնադաստիարակչական աշխատանքնե-րի և ներքին գնահատման հաշվետվություններ
Վարչական շրջանի աշխատակազմի հետ դպրոցի 7-9-րդ դասարանների սովորողների շրջանում կազմակերպել «Շենգավիթ վարչական շրջանի հնագիտական նշանակու-թյան վայրերը» թեմայով նախագծային աշխատանքների մրցույթ	Համայնքի հետ համագործակցության, սովորողների կարողունակությունների և արժեքային համակարգի բարելավում: Տարվա ընթացքում մեկ անգամ	Վարչական շրջանի ստորաբաժանում տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումներ, խորհրդակցական մարմիններ	2024-2029թ.թ	տեղեկատվական միջոցներ, ինտերնետային պաշարներ, խրախուսման միջոցներ	Պետական բյուջե	Մշտադիտարկում, Ներքին գնահատման հաշվետվություններ, մեթոդմիավորումների, հաշվետվություններ
Դրամաշնորհային ծրագրերի մասնակցության հայտերի նախապատրաստում	Հեղինակային ծրագրերի ներդնում	Տնօրենություն, Մեթոդմիավորումներ	2024-2029թ.թ	Համացանցի ռեսուրսներ, հասմապատասխան գրականություն	Ֆինանսական միջոցներ չի պահանջվում	Մշտադիտարկում, Ներքին գնահատման հաշվետվություններ,

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Մանկավարժական գրականության մեջ հանդիպում են ուսումնական միջավայրի տարբեր բնորոշումներ: Դրանց մի մասի մոտեցմամբ այն «համակարգային ձևավորված տարածք է, որտեղ իրականացվում է ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխազդեցությունը արտաքին միջավայրի հետ, որի արդյունքում բացահայտվում են սովորողների անհատական առանձնահատկությունները»:Կրթական միջավայրը ապահով է, եթե յուրաքանչյուր սովորողի համար ձևավորված են ապրելու, սովորելու, տարաբնույթ գործունեություն ծավալելու հարմարավետ պայմաններ:

Յուրաքանչյուր աշակերտի հաջողության վրա կենտրոնացած դպրոցական կրթական միջավայրի ստեղծումը ապահովում է հաստատությունում իրականացվող բոլոր կրթական ծրագրերի և ուսուցման անհատական ծրագրերի շարունակականությունն ու հետևողականությունը, ուսուցիչների և ծնողների գործողությունները, երեխայի և համակազմի զարգացումը՝ որպես ամբողջություն:

Դպրոցի տնօրենության ուշադրության կենտրոնում են եղել արդյունավետ ուսումնական միջավայրի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները, կրթության գործընթացի մասնակիցների համագործակցության, սովորողների համար անվտանգ և հարմարավետ պայմանների ապահովումը: Դրանց շարքում զգալի է նաև շենքային պայմանների բարելավման, նյութատեխնիկական բազայի համալրման ուղղությամբ իրականացված միջոցառումները, որի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է այդ ոլորտի նկարագրության բաժնում: Կրթական գործընթացի մասնակիցների շրջանում իրականացված հարցումների արդյունքների վերլուծության արդյունքները փաստում են, որ ուսումնական միջավայրը անվտանգ է և զերծ սովորողների ֆիզիկական և հոգեկան առողջությանը վնասող երևույթներից: Աշխատակազմի հետևողականության արդյունքում դպրոցի սովորողների շրջանում կանխարգելվել են ֆիզիկական և հուզական բռնության դեպքերը:

Մասնաշենքերի բոլոր հարկերում փակցված է արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման պլանի սխեման: ԱԻՆ-ի հետ համագործակցության շրջանակում տնօրենի կողմից հաստատվել է ԱՌԿ ծրագիր, տարվա ընթացքում կազմակերպվում են ուսումնական վարժանքներ:

Դպրոցի բոլոր ելքային ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն: Հաստատության անձնակազմը և սովորողները իրազեկված են արտակարգ իրավիճակների ժամանակ գործելու վարքականոններին: Այդ նպատակով պարբերաբար անց են կացվում տարբեր միջոցառումներ և քննարկումներ:

Ներառական կրթության իրականացման արդյունավետ կազմակերպման հիմքում հասարակության մեջ առկա կարծրատիպերի վերացման աշխատանքների իրականացումն է (սեմինարների, քննարկումների կազմակերպում, թեմատիկ տեսաֆիլմերի դիտում, հոգեբանի հանդիպումներ և այլ), որի շնորհիվ բացառվել է բուլինգի դեպքերի առկայությունը:

Դասղեկների կողմից սովորողների շրջանում կազմակերպվում են ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման, կանխարգելման, ինչպես նաև ծնողների համար երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման ու բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխային զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ իրազեկմանն ուղղված միջոցառումներ, 8-9-րդ դասարանների սովորողների համար կազմակերպվում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ տեղեկատվական սեմինարներ, տեսաֆիլմերի դիտում, հոգեբանի հետ հանդիպումներ:

Առարկայական կաբինետները դիդակտիկ նյութերով և այլ միջոցներով համալրումը ևս դպրոցի կառավարման առաջնային գործառույթներից է:

Ջ. Դունայանցի ժառանգների (դպրոցի հովանավորների) հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել բարեկարգելու դպրոցի բակային տարածքը, որի շնորհիվ այն կծառայի որպես համայնքի հանգստի գոտի(հատակագիծը տրված է հավելվածում):

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

▪ Սովորողների համար անվտանգ տեղաշարժման պայմաններ, ▪ արտակարգ իրավիճակների դեպքում, համապատասխան միջոցների առկայություն(կրակմարիչ և այլ պարագաներ) ▪ Դպրոցի բոլոր հարկերում փակցված է արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման պլանի սխեման ▪ Բարոյահոգեբանական առողջ, համագործակցային միջավայր ▪ Բարեկարգված և գույքով համալրված օժանդակ տարածքների առկայություն(գրադարան, ընթերցասրահ, բուժկետ, բուֆետ, մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճև այլն) ▪ Աշխատակազմի և սովորողների կողմից արտակարգ իրավիճակների դեպքում վարքագծային կանոնների իմացություն • Սովորողների և ծնողների շրջանում իրազեկման միջոցների առկայություն • Գրադարանը ապահովված է գեղարվեստական գրականությամբ և ուսումնական նյութերով • Բոլոր աշակերտները ապահովված են դասագրքերով • Սովորողների և աշխատակազմի տրամադրության տակ են դպրոցի ռեսուրսները • Ապահովված են արտադասարանական խմբակների երկարօրյա ուսուցման կազմակերպման պայմանները • Շնորհալի և ստեղծագործող սովորողների համար առկա է բարենպաստ միջավայր • Տեսասրահի առկայություն	➢ Դասասենյակներում, կաբինետներում ՏՀՏ մի ջոցներով համալրելու անհրաժեշտություն: ➢ Արտակարգ իրավիճակներում աշխատակիցներին և սովորողներին անվտանգ տարածք տեղափոխելու անհնարինություն.՝ ապաստարանի բարեկարգված տարածքի բացակայություն ➢ ՆԶՊ առարկայի գործնական աշխատանքների պայմանների բացակայություն ➢ Էլեկտրոնային հրաձգարանի բացակայություն ➢ ՏՀՏ միջոցների արդիականացման անհրաժեշտություն ➢ Ինֆորմատիկայի երկրորդ կաբինետ ունենալու անհրաժեշտություն ➢ ԿԱՊԿ ունեցող սովորողների համար լիարժեք լիարժեք հարմարեցումների բացակայություն ➢ Ընթերցասրահի տարածքի ընդլայնման անհրաժեշտություն ➢ Մարզահրապարակի բարեկարգման անհրաժեշտություն ➢ Ապաստարանի բացակայություն ➢ Ներառական ուսուցման կազմակերպման անհրաժեշտության կարծրատիպերի առկայություն

Ուսումնական միջավայրի բարելավման նպատակները, խնդիրները, ռիսկերը, ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողությունները

Նպատակ

Կրթության բովանդակային բաղադրիչների ապահովման պահանջներին համարժեք սովորողների համար անվտանգ և հարմարավետ ուսումնական միջավայրի ձևավորում

Խնդիրներ

1. Սովորողների հետաքրքրությունների և նախասիրությունների, ստեղծագործական ունակությունների զարգացման հնարավորությունների առկա ձևերի բազմազանության ապահովում
2. Խտրականությունը բացառող, աշակերտների մեկուսացումը կանխարգելող միջավայրի ձևավորում

Ռիսկեր

1. Արտակարգ իրավիճակներ
2. Լրացուցիչ ֆինանսական միջոցների բացակայություն
3. Հասարակության կողմից ներառական կրթության կազմակերպման անհրաժեշտության թյուրըմբռնում

Ռիսկերը ազդեցությունը մեղմող գործողություններ

1. Վճարովի ծառայությունների իրականացում
2. Ծնողական համայնքի և աշակերտական կազմի հետ տեղեկատվական հանդիպումների սեմինարների, քննարկումների կազմակերպում

Գործողություններ	Արդյունքների գնահատման չափանիշ	Պատասխանատու	Ժամկետ	Անհրաժեշտ միջոցներ	Ֆինանսական միջոցներ	Վերահսկման մեխանիզմներ
Աշակերտների նախասիրություններին համապատասխան խմբակների պայմանների ապահովում	Սովորողների մոտիվացիայի բարձրացում, կարողունակությունների ձևավորման պայմանների առկայություն	Տնօրեն, վարչատնտեսական համակագող	2024-2025թ.թ.	Գույք, ՏՀՏ և այլ միջոցներ,նախաս իրությունների կարիքների ճշտման հարցումների արդյունքներ	Պետբյուջե	Մշտադիտարկում, Վարչատնտեսական համակարգողի Ներքին գնահատման հաշվետվություններ
Սովորողների համար կազմակերպել ծխելու, ալկոհոլի,վատ սովորույթների հետևանքների վերաբերյալ զրույցներ, ստեղծել սահիկահանդեսների և տեսաֆիլմերի ռեսուրսների բանկ	Սովորողների տեղեկատվության ապահովում, վատ սովորույթների կանխարգելում, մեդիակարկարողունակությունների զարգացում	Տնօրեն, մասնագիտական աջակցությունների գծով տեղակալ, դասղեկներ, հոգեբան, աշակերտական, ծնողական խորհուրդներ	2024-2029թ.թ	Տեղեկատվական աղբյուրներ, բրոշյուրներ, տեսաֆիլմեր, հրավիրված մասնագետներ, հոգեբան, բժիշկ, իրավաբան և այլն	Պետական բյուջե	Մշտադտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման, մասնագիտական աջակցությունների գծով տեղակալի, դասղեկների հաշվետվություններ

Սովորողների և ծնողների համար կազմակերպել համացանցում անվտանգ վարքագծի կանոնների, համացանցային կախվածության կանխարգելման հարցերի վերաբերյալ զրույցներ(ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ)	Համացանցից օգտվելու կանոնների իմացություն, անվտանգ կրթական միջավայրի ապահովում	Տնօրեն, մասնագիտական աջակցությունների գծով տեղակալ, դասղեկներ, հոգեբան, Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ, ծնողական, աշակերտական խորհուրդ	2024-2029թ.թ	Տեղեկատվական նյութեր, բրոշյուրներ, տեսաֆիլմեր, հրավիրված մեդիա մասնագետներ, հոգեբան, բժիշկ,	Պետական բյուջե	Մշտադտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանք-ների, ներքին գնա-հատման, մասնագիտական աջակցությունների գծով տեղակալի, դասղեկների հաշվետվություններ
Կազմակերպել«Ես մեդիարագրագետ եմ» դաս- քննարկումների շարք	Մեդիայից օգտվելու հմտությունների զարգացում, Մեդիագրագիտության ապահովում	Տնօրենություն, դասղեկներ, հոգեբան, Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ, ծնողական, աշակերտական խորհուրդներ	2024-2029թ.թ	Տեղեկատվական նյութեր, բրոշյուրներ, տեսաֆիլմեր, հրավիրված մեդիա մասնագետներ, հոգեբան, բժիշկ,	Պետական բյուջե	Մշտադտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանք-ների, ներքին գնա-հատման, մասնագիտական աջակցությունների գծով տեղակալի, դասղեկների հաշվետվություններ
Աշխատակազմի և սովորողների համար Աղետների ռիսկի կառավարման(ԱՌԿ)պլանին համապատասխան ուսումնական միջոցառումների կազմակերպում	Արտակարգ իրավիճակներում վարքագծային կանոնների իմացություն	Տնօրեն, մասնագիտական աջակցությունների գծով տեղակալ, դասղեկներ, Զինղեկ	2024-2029թ.թ	Տեղեկատվական նյութեր, գրականություն, ԱՌԿ պլան, մասնագետներ	Պետական բյուջե	Մշտադտարկում, Ներքին գնահատման, մասնագիտական աջակցությունների գծով տեղակալի, դասղեկների, զինղեկի հաշվետվություններ
Ծնողների և սովորողների համար կազմակերպել բռնության, հալածանքի,	Ֆիզիկական և հուզական բռնության դեպքերի կանխարգելում	Տնօրեն, մասնագիտական աջակցությունների գծով տեղակալ,	2024-2029թ.թ	Տեղեկատվական նյութեր, գրականություն, տեսաֆիլմեր.	Պետական բյուջե	Մշտադտարկում, Ուսումնադաստիարակչական աշխատանքների,

բուլինգի վարքագծային դրսևորումների և դրանց բացառման ու հաղթահարման վերաբերյալ զրույցներ, քննարկումներ(Տարվա ընթացքում առնվազն երկու անգամ)		դասղեկներ, հոգեբան, ծնողական, աշակերտական խորհուրդներ		Հրավիրված մասնագետներ		ներքին գնահատման, հաշվետվություններ, ծնողական, աշակերտական խորհուրդների նիստերի արձանագրություններ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ

2023-2024 ուսումնական տարում մանկավարժական համակազմը համալրվել է բարձրագույն մասնագիտական որակավորում ունեցող ուսուցիչներով: Նախորդ տարիների ընթացքում դպրոցում աշխատող միջին մասնագիտական կրթություն ունեցող կադրերի հետ դպրոցի տնօրենը լուծել է աշխատանքային պայմանագրերը: Դպրոցի 42 ուսուցիչները ունեն բարձրագույն կրթություն և համապատասխան որակավորում, տարակարգ ունի 3 ուսուցիչ(6,5%), կամավոր ատեստավորմանը մասնակցել է հինգ ուսուցիչ և հավաքել բարձր միավորներ(80-90%):

Մանկավարժական համակազմից 3-ը վարչական աշխատողներ են, 42 –ը՝ ուսուցիչներ, աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 64: Համակազմի և ուսուցիչների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև.













Առաջիկա հինգ տարիների համար զգալի ներդրումներ պետք է արվեն մանկավարժական համակազմի մասնագիտական զարգացումն ապահովելու, բարձրակարգ որակավորմանբ ուսուցիչներով համակազմը համալրելու ուղղությամբ: Հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների և հանրակրթական ու առարկայական չափորոշիչների ներդնումը նոր մարտահրավերներ են առաջադրում դպրոցի համակազմի առջև: Կառավարման և կրթության

բովանդակության կազմակերպման առանձնահատկություններով պայմանավորված վարչական անձնակազմի և ուսուցիչների շարունակական վերապատրաստումներին մասնակցության անհրաժեշտությունը հրատապ լուծումներ պահանջող ռազմավարություններից է: Հանրակրթության մասին ՀՀ օրենքում ամրագրված տնօրենի գործառույթներց են՝

1. խրախուսում և խթանում է աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունը.

2. աջակցում է ուսուցիչների մասնակցությանը հերթական և կամավոր ատեստավորումներին.

3. խրախուսում է մասնակցային կառավարումն ուսումնական հաստատության մարմիններում.

4. իրականացնում է վերահսկողություն դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, առաջադիմության, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, դպրոցի աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

Համաձայն հաստատության կանոնադրության տնօրենը պայմաններ է ստեղծում ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացման համար: Դպրոցի մանկավարժական համակազմի ուղղությամբ իրականացվող գործողությունները պլանավորելու համար կարևորում եմ մասնագիտական կարիքների վերլուծության արդյունքների վրա իրականացվող վերապատրաստման ծրագրերի իրականացումը: Այս մոտեցումը հնարավորություն կտա որոշելու այդ նպատակով իրականացվող գործողությունների առաջնահերթությունները: Պլանավորումը կիրականացվի մասնագիտական զարգացման(ՄԶ) հետևյալ փուլերի հաշվառմամբ, ինչպես նաև հաշվի կառնվի ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թ. հ.30-Ն հրամանով սահմանված «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները» նորմատիվային փաստաթղթի պահանջները :

Ուսուցչի մասնագիտական զարգացման իրականացման փուլերը



ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Կառավարման հմտություններ ունեցող վարչական աշխատակազմ • Կրթական համակարգի բարեփոխումներին և կրրթության քաղաքականության զարգացման ուղղություններին իրազեկ մանկավարժական համակազմ • Հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների ներդրման ուղղությամբ վերապատրաստված վարչական և ուսուցչական համակազմ • Ուսուցիչներ զգալի մասը մասնակցել է պարտադիր	Մասնագիտական բարձր որակներ ունեցող ուսուցիչների պակաս Դասավանդման ընթացքում ՏՀՏ միջոցների օգտագործման գործելաոճի մշակույթի զարգացման անհրաժեշտություն Ձևավորող գնահատման ձևերի մշակման հմտությունների կատարելագործման անհրաժեշտություն Նախագծային ուսուցման մեթոդի կիրառման առանձնահատկությունների և մեթոդների իմացության պակաս

ատեստավորման վերապատրաստման դասընթացնե-ին և ատեստավորվել: • Դպրոցի վարչական կազմը տրապետում է դպրոցի ենթակառուցվածքների ղեկավարման և կառավարման հմտություններին • Ուուսուցիչներն ունեն անհրաժեշտ որակավորում, աշխատում են համաձայն իրենց մասնագիտական որակավորման, փորձառու են • Տարակարգ ունեցող ուսուցիչների առկայություն • Կամավոր ատեստավորման դիմած և բարձր արդյունքներ ցուցաբերած ուսուցիչների առկայություն • Ուսուցման արդի մոտեցումներ կիրառող ուսուցիչներ • Արտակարգ իրավիճակներում առցանց դասընթացներ վարելու հմտություններ ունեցող ուսուցիչներ • Սկսնակ ուսուցիչներին աջակցող թիմի առկայություն • Մանկավարժական աշխատողների իրավունքներին և պարտականություններին իրազեկ, ուսուցչի բարվարքության պահանջները հստակ պատկերաց-նող և արժևորող թիմ	▪ Դասավանդման էլեկտրոնային ռեսուրսների բազայի հարստացման անհրաժեշտություն ▪ Ուսուցիչների կողմից ստեղծագործական, հետազոտական աշխատանքներ կատարելու անպատրաստակամություն ▪ Կամավոր ատեստավորմանը մասնակցող ուսուցիչների պակաս ▪ Մասնագիտական զարգացման ծրագրի և ժամանակացույցի բացակայություն ▪ Մասնագիտական կարիքների գնահատման համակարգի բացակայություն ▪ Ըստ ուսուցիչների մասնագիտական կարիքների համակարգված վերապատրաստումների բացակայություն

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների բարելավման նպատակները, խնդիրները, ռիսկերը, ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողությունները

Նպատակ

Կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին արձագանքող, ստեղծագործական կարողունակություններ ունեցող, նորարարական ծրագրեր իրականացնող մանակավարժական համակազմի ձևավորում

Խնդիրներ

1. . Մանկավարժական համակազմի կառավարման և ղեկավարման հմտությունների զարգացում
2. Ուսուցիչների մասնագիտական որակների և հմտությունների բարելավում
3. Ուսուցման կազմակերպման նոր մոտեցումների և արդի տեխնոլոգիաների նպաստավոր պայմանների ապահովում

Ռիսկեր

- Ուսուցչի գործունեության ոչ լիարժեք կարևորում և գնահատում
- Ուսուցչի հեղինակության և մասնագիտության գրավչության անկում

Ռիսկերը ազդեցությունը մեղմող գործողություններ

- Մանկավարժական համակազմի գործունեությունը արժևորող ցերեկույթների կազմակերպում՝ դպրոցի նախկին շրջանավարտների և կրթության շահառուների մասնակցությամբ
- Կամավոր ատեստավորման և ուսուցչի տարակարգին դիմելու ընթացակարգերի հետ կապված հարցերի քննարկումների կազմակերպում
- Լրացուցիչ կրթական ծառայությունների իրականացում

Գործողություններ	Արդյունքների գնահատման չափանիշ	Պատասխանատու	Ժամկետ	Անհրաժեշտ միջոցներ	Ֆինանսական միջոցներ	Վերահսկման մեխանիզմներ
Մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքների ճշտում, ծրագրի կազմում, մասնագիտական որակների բարձրացմանն ուղղված տարբեր ծրագրերի իրականացում. 1.Մասնակցություն արտաքին վերապատրաստումներին 2.Մասնակցություն առցանց դասընթացներին 3.Վարպետության դասերի կազմակերպում 4.ՀՊՉ-ի ներդրման սեմինարների, քննարկումների կազմակերպում հրավիրված մասնագետների հետ	Մասնագիտական զարգացման ծրագրի առկայություն.	Տնօրենություն, մեթոդմի-ավորումների նախագահներ, ուսուցիչներ	2024-2029թթ.	Դասի դիտարկման չափանիշներ,Դասալսումների արդյունքների վերլուծություններ, ինքնագնահատման և փոխադարձ գնահատման վերլուծություններ, գրավոր աշխատանքների արդյունքներ և այլն, մասնագետներ	Պետական բյուջե	Մշտադիտարկում, Ներքին գնահատման, ուսումնադաստիա-րակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ
Գնահատման այլընտրանքային ձևերին. ուսուցման մեթոդների ու հնարների կիրառման հմտությունների բարելավմանն	Ուսուցման ընթացքում առաջացած խնդիրների բացահայտում	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումների նախագահներ	2024-2029թթ	Դասընթացավարներ,տեղեկատվական նյութեր, ՏՀՏ միջոցներ	Պետական բյուջե	Մշտադիտարկում, Ներդպրոցական վերահսկողության, ուսումնադաստիարակ-չական աշխատանքների,

ուղղված դասընթացների կազմակերպում	Ձևավորող գնահատման տարբեր ձևերի կիրառում, դասավանդման մասնակցային մշակույթի ձևավորում					մեթոդմիավորումների հաշվետվութ յուններ
«Առարկայական նոր չափորոշիչներով պայմանավորված դասագրքերի օգտագործման առանձնահատկությունները» թեմայով քննարկումների շարքի կազմակերպում դասագրքերի հեղինակների մասնակցությամբ	Դասվանդող ուսուցիչների հմտությունների բարելավում	Տնօրենություն, մեթոդմիավորումների նախագահ-ներ,	2024-2029թ.թ ուս.տարվա ընթացքում մեկ անգամ	ՏՀՏ և այլ միջոցներ, դասագրքերի հեղինակներ	Պետական բյուջե	Մշտադիտարկում, Ուսումնադաստիարակչական աշխատանքների Ներքին գնահատման, մեթոդմիավորումների հաշվետվությունններներ
«Համընդհանուր ներառական քաղաքականության իրականացման խոչընդոտները» թեմայով սեմինարի կազմակերպում	Մանկավարժական համակազմի տեղեկատվության ապահովուն Կարծրատիպերի հաղթահարում	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումների նախագահներ, դասղեկներ, ուսուցիչներ	2024-2029թ.թ Յորաքանչյուր ուս.տարվա ընթացքում մեկ անգամ	Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնից հրավիրված սեմինարավար-ներ, ՏՀՏ և այլ միջոցներ	Պետական բյուջե	Մշտադիտարկում, Ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման, մեթոդմիավորումների, դասղեկների հաշվետ-վություններներ
Գրադարանում ստեղծել դասավանդվող յուրաքանչյուր առարկայի էլեկտրոնային պաշարների շտեմարան	Դասապրոցեսի կազմակերպման արդիականացում	Տնօրենի տեղակալ, մեթոդմիավորումների նախագահներ, գրադարանավար ուսուցիչներ	2024-2029թ.թ.	Համացանց, ՏՀՏ միջոցներ, ինտերակտիվ գրատախտակ և այլն	Ֆինանսական միջոցներ չի պահանջվում	Մշտադիտարկում, Ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման, մեթոդմիավորումների հաշվետվություններ

Մանկավարժական աշխատողների համար կազմակերպել քննարկումներ դասարանի կառավարման և հաղորդակցման ձևերի կիրառման հարցերի վերաբերյալ	Դասարանի կառավարման խոչընդոտների հաղթահարում	Տնօրենություն, հոգեբան	2024-029թ.թ.	Համացանց, ՏՀՏ միջոցներ, տեղեկատվական ռեսուրսներ, հրավիրված մասնագետներ	Պետական բյուջե	Մշտադիտարկում, Ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման, մեթոդմիավորումների հաշվետվություններ
Յուրաքանչյուր տարվա համար կազմել հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների ժամանակացույցը	Վերապատրաստման արդյունքում նոր մոտեցումների կիրառում դասավանդման գործընթացում	Տնօրենություն	2024-2029թթ.	Ժամանակացույց և ուսուցիչ-ների տեղեկա-տվության ապահովում	Պետական բյուջե	Մշտադիտարկում,, Ներքին գնահատման, մեթոդմիավորումների հաշվետվություններ. Դասալսումների արդյունքների վերլուծություն
Դասի պլանավորման ձևաչափի վերաբերյալ խորհրդատվության կազմակերպում	Դասի իրատեսական պլանավորում	Տնօրենություն, մեթոդմիավո-րումների նախագահներ	2024-2029թթ.	Դասի պլանավորման ձևանմուշներ	Ֆինանսավորում չի պահանջվում	Մշտադիտարկում,, Ուսումնադաստիարակչական աշխատանքների, Ներքին գնահատման, մեթոդմիավորումների հաշվետվություններ. Դասալսումների արդյունքների վերլուծություն
Մասնագիտական զարգացման տարբեր միջոցառումների իրականացում 1.Մասնագիտական քննարկումներ 2.Գործընկերային ուղղորդում և մենթորություն 3.Փոխադարձ դասալսումներ 4.Թիմային ուսուցում 5.Մասնագիտական այցեր այլ դպրոցներ և այլն	Մանկավարժական աշխատողների մասնագիտական որակների բարելավում	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մե-թոդմիավորումնե ի նախագահներ	2024-2029թ.թ.	Մասնագիտակ ան զարգացման պլան	Ֆինանսավորում չի պահանջվում	Մշտադիտարկում,, Ուսումնադաստիարակչական աշխատանքների, Ներքին գնահատման, մեթոդմիավորումների հաշվետվություններ.

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատակազմի մոտիվացիայի բարձրացման գործում զգալի դերակատարում ունի խրախուսման տարբեր ձևերի կիրառումը, որոնք ներառում են ոչ միայն նյութական, այլև ոչ նյութական խրախուսման ձևերը: Աշխատակազմի կառավարման առանձնահատկությունները նկարագրող բոլոր տեսական մոտեցումներում նշվում է այդ գործընթացում մի քանի սկզբունքների ապահովման անհրաժեշտությունը. դրանցից են՝ թափանցիկությունը, հրապարակայնությունը, արդարությունը և այլն: Հետագա գործունեությանս ընթացքում մոտիվացիայի վրա ազդող գործոնների հաշվառումը համակազմի անդամների աշխատանքից և ներդրած ջանքերից բավարարվածության առումով ևս կառավարման գործընթացի կարևոր մաս կկազմի: Կամավոր ատեստավորման մասնակցելու խթան կարող է հանդիսանալ տնօրինության կողմից ուսուցչի մասնագիտական որակական ցուցանիշների բարձրաձայնումը, հնարավորության ընձեռնումը ինքնագնահատականի և անվստահության գործոնի հաղթահարումը:

Դպրոցում ավանդական խրախուսման ձևերի կիրառմանը զուգընթաց զարգացման ծրագրում նախատեսվել են նաև այլ միջոցառումներ, որոնք կնպաստեն դպրոցում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը, ուսուցման և ուսումնառության գործընթացների արդյունավետության բարձրացմանը: Հետագայում խրախուսման տարբեր ձևերի կիրառման նպատակով դպրոցի համակազմի շրջանում նախատեսում եմ իրականացվել է հարցում հետևյալ գնահատման սյունակաշարի միջոցով.

Հարցաթերթիկ

Հարգելի Գործընկեր

Խնդրում ենք 1-5 միավորային գնահատման սանդղակում գնահատել Ձեր գործունեության մոտիվացիայի վրա ազդող գործոնները

	Խրախուսման տեսակը	**1**	**2**	**3**	**4**	**5**
	Ֆինանսական միջոցների տրամադրում					
	Ազատ օրերի տրամադրում					
	Արդյունքների ապահովման համար բանավոր և գրավոր շնորհակալագրեր					
	Գործընկերների կողմից ճանաչում					
	Հետաքրքիր աշխատանք կատարելու հնարավորություն					
	Ուսումնական ծանրաբեռնվածության ընտրության հնարավորություն					
	Լրացուցիչ նյութատեխնիկական ռեսուրսների տրամադրում ավելի արդյունավետ աշխատելու համար					
	Տարբեր խրախուսական մրցանակներին ներկայացում					
	Ձեր նվաճումների մասին հրապարակումների ներկայացում ինտերնետային կայքէջերում և ամսագրերում					
	Պաշտոնային առաջխաղացումը					

	Որոշ գործընթացներ իրականացնող խմբի առաջնորդի դերի վստահումը					
	Հաշվետվությունների ներկայացման ընթացքում հաջողություններին հասնելու գործում Ձեր ներդրման կարևորումը					
	Որպես մենթոր ուսուցիչ Ձեր գործունեության ներկայացումը դպրոցի կայքէջում և սոցիալական հարթակներում					
	Կրթության գործընթացի մասնակիցների շրջանում իրականացվող հարցումների արդյունքում Ձեր գործունեության կարևորումը					
	Տնօրենության կողմից մ/մ նիստում սովորողների վերջնարդյունքներ ապահովման գործում Ձեր ներդրման կարևորումը					
	Լիազոր մարմնի և այլ կազմակերպությունների կողմից մանկավարժական ձեռքբերումների համար պարգևատրումը					
	Դրամական պարգևատրում					

	Ծնողների կողմից շնորհակալագրի արժանանալը					
	Մանկավարժական կոլեկտիվի, գործընկերների կողմից դրվատանքի արժանանալը					
	Հարակից առարկաների ուսուցիչների կողմից մասնագիտական որակների մասին բարձրաձայնումը					
	Այլ					

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Որոշումները համատեղ ընդունելու ձևավորված մշակույթի առկայություն • Խրախուսման տարբեր ձևերի՝ նյութական և ոչ նյութական ձևերի օգտագործում • Մանկավարժական աշխատողների մոտիվացիայի տարբեր ձևերի կիրառման հնարավորություններ • Աշխատակազմի ներդրած ջանքերի գնահատման չափանիշների առկայություն • Համակազմի առաջխաղացման պայմանների առկայություն • Աշխատակազմի կողմից նորարարական մոտեցումների ներդրման պայմանների ապահովում և խրախուսում • Մասնագիտական առաջընթացն ապահովող տարբեր վերապատրաստումների և մրցույթներին մասնակցելու հայտերի ներկայացման տեղեկատվության ապահովում • Մանկավարժական աշխատողների գործունեության գնահատման մշակված ձևերի առկայություն	• Մանկավարժական աշխատողների մոտիվացիայի պակաս • Առաջխաղացման հնարավորությունների նկատմամբ թերհավատություն, անվստահություն • Կամավոր ատեստավորման և տարակարգի դիմելու հոգեբանական խոչնդոտների առկայություն(վախ, անհանգստություն, խուճապ) • Մանկավարժական աշխատողների ծանրաբեռնված և լարված մտավոր աշխատանք • Դպրոցի գործունեությունը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերի ոչ բավարար իմացություն -

• Խրախուսման չափանիշների հրապարակայնության, թափանցիկության, արդարության սկզբունքների պահպանում	

Աշխատակազմի արժեորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների ապահովման նպատակները, խնդիրները, ռիսկերը, ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողությունները

Նպատակ

Աշխատակազմի արժեորման, խրախուսման և ինքնակրթության արդյունավետ ձևերի ներդնում

Խնդիրներ

2.Մանկավարժական աշխատողների գործունեության գնահատման մեխանիզմների ներդնում
3.Ուսուցչի մասնագիտական առաջխաղացման խրախուսման տարբեր ձևերի ներդնում

Ռիսկեր

- Ուսուցչի հեղինակության և մասնագիտության գրավչության անկում
- ֆինանսական միջոցների խնայողությունների բացակայություն

Ռիսկերը ազդեցությունը մեղմող գործողություններ

- Կամավոր ատեստավորման և ուսուցչի տարակարգին դիմելու ընթացակարգերի հետ կապված հարցերի քննարկումների կազմակերպում
- Նյութական խրախուսման միջոցների նախատեսում
- Լրացուցիչ կրթական ծառայությունների իրականացում
- Այլ մոտիվացնող խրախուսման միջոցների իրականացում

Գործողություններ	Արդյունքների գնահատման չափանիշ	Պատասխանատու	Ժամկետ	Անհրաժեշտ միջոցներ	Ֆինանսական միջոցներ	Վերահսկման մեխանիզմներ

Կազմակերպել վաստակաշատ մանկավարժական աշխատողների, ուսուցչի մասնագիտության կարևորման միջոցառումներ՝ներգրավելով դպրոցի նախկին շրջանավարտներին և ուսուցիչ վետերաններին(յուրաքանչյուր ուս տարվա ընթացքում մեկ անգամ):	Ուսուցչի մասնագիտության գրավչության կարևորում, մոտիվացիայի բարելավում	Տնօրենություն, մեթոդմիավորումների նախագահներ Կառավարման և խորհրդակցական մարմիններ	2024-2029թ.թ	ՏՀՏ և այլ միջոցներ, տեսաֆիլմեր	Ֆինանսական միջոցներ չի պահանջվում	Տնօրենի, Ուսումնադաստիարակչական աշխատանքների, Ներքին գնահատման, հաշվետվություններ. Կառավարման և խորհրդակցական մարմինների նիստերի արձանագրություններ
Յուրաքանչյուն ուսումնական տարում՝ կազմակերպել դասավանդման որակի բարելավման հարցերին ուղղված մանկավարժական ընթերցումներ, լավագույն աշխատանքները արժանացնել խրախուսական մրցանակների:	Ուսուցչի դերի բարձրացում, մասնագիտության արժևորում	Տնօրենություն, մեթոդմիավորումների նախագահներ	2024-2029թթ.	Համացանց, Նյութական և ոչ նյութական խրախուսման միջոցներ(պատվոգիր. շնորհակալագիր և այլն)	Պետական բյուջե	Ուսումնադաստիարակչական աշխատանքների, Ներքին գնահատման, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ
«Տարվա լավագույն մանկավարժական աշխատող» մրցույթը, արդյունքները ներկայացնել ուսուցչի տոնին նվիրված միջոցառման ընթացքում:	Մանկավարժական աշխատողների մոտիվացիայի բարձրացում	Տնօրենություն,, մեթոդմիավորումների նախագահներ	ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ	Մրցույթի կանոնակարգ, անվանակարգերի չափանիշներ խրախուսման միջոցներ	Պետական բյուջե	Ուսումնադաստիարակչական աշխատանքների, Ներքին գնահատման, հաշվետվություններ. մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ
Լավագույն նախագծային աշխատանքի համար պարգևատրված սովորողների ուսուցիչների համար նախատեսել խրախուսական մրցանակներ	Ուսուցչի դերի և հեղինակության բարձրացում	Տնօրենություն, մեթոդմիավորումների նախագահներ	ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ	Պատվոգրեր. շնորհակալագրեր և այլն	Պետական բյուջե	Մշտադիտարկում Ուսումնադաստիարակչական աշխատանքների, Ներքին գնահատման, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ
Ուսուցչի աշխատանքի գնահատման և խրախուսման չափանիշներում ներառել կամավոր ատեստավորման	Ուսուցիչների մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների օգտագործում	Տնօրենություն, մեթոդմիավորումների նախագահներ	2024-2029թ.թ.	Խրախուսման չափանիշնիեր	Ֆինանսական միջոցներ չի պահանջվում	Մշտադիտարկում Ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման,

մասնակցության և տարակարգ ունենալու անհրաժեշտությունը						հաշվետվություններ. մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ
Առարկայական օլիմպիադաներում և այլ մրցույթներում բարձր արդյունքներ ցուցաբերած ուսուցիչներին արժանացնել խրախուսական մրցանակների	Ուսուցչի դերի և հեղինակության բարձրացում	Տնօրենություն, մե-թոդմիավորումների նախագահներ	ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ	Պատվոգրեր. շնորհակալագրեր և այլն	Պետական բյուջե	Մշտադիտարկում Ուսումնադաստիարակչական աշխատանքների, Ներքին գնահատման, հաշվետվություններ.

ՏՀՏ, ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մինչև 2030թ. Կրթության զարգացման պետական ծրագրում հանրակրթության ոլորտի առաջնահերթություններից է համարվում տեխնոլոգիաների շարունակական արդիականացման նպատակով ուսումնական գործընթացում ժամանակակից տեղեկատվական և (ՏՀՏ) առավել լայն թվային կիրառումը, հանրակրթական դպրոցների համալրումը արդիական համակարգչային միջոցներով, մեդիագործիքներով և որակյալ ինտերնետային կապով ապահովման ծրագրերի իրականացումը:

ՀՀ կառավարության 2021-2026 ծրագրում է նշված է «Կրթության բոլոր մակարդակների համար առանցքային են լինելու ներառական կրթական միջավայրի ստեղծումը, կրթության բովանդակության և կրթական ծրագրերի արդիականացումը, անհրաժեշտ ենթակառուցվածքների արդիականացումն ու վերազինումը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը ուսուցման և կառավարման համակարգերում»: Հանրակրթական դպրոցներում ինժեներական լաբորատորիաների ստեղծման ուղղությամբ իրականացվող աշխատանքները ևս ընդգրկված են առաջնահերթությունների ցանկում:

Կառավարման գործընթացի արդյունավետությանը նպաստում է դպրոցի տեղեկատվական բազայի ներկայացման ավտոմատացումը, էլեկտրոնային մատյանների ներդնումը, դպրոցի դասացուցակի կազմման և հաստատման էլեկտրոնային համակարգը, դասագրքերի պատվերների և հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի առկայությունը: Կրթության գործընթացի մասնակիցներին տեղեկատվություն ապահովելու նպատակով դպրոցի կայքէջում ներկայացվում է դպրոցի գործունեության առանձնահատկությունները, տարբեր ոլորտների վերաբերյալ տեղեկատվություն, հաշվետվություններ և այլն: Տարբեր կազմակերպությունների կողմից(ԿԶՆԱԿ, ՀԿՏԱԿ և այլ) տեղեկատվական և մեթոդական

ռեսուրսների օգտագործումը նպաստում է դպրոցի գործունեության արդյունավետությանը: Կայքեր, որոնք օգտագործվում են ուսուցիչների և կրթության գործընթացի մասնակիցների կողմից.

1.	https://arlis.am
2.	https://escs.am
3.	https://kznak.am/
4.	https://matyan.emis.am
5.	DSHH.am
6.	https://lib.armedu.am/
7.	https://esource.armedu.am/
8.	https://emis.am
9.	https://e-diary.emis.am/
10.	http://www.armedu.am
11.	http://forum.armedu.am/
12.	http://youTube.com

Դպրոցի տնօրենության կողմից վերջին տարիներին կարևորվել են մանկավարժական համակազմի կողմից նոր տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտության, հեռավար հարթակներում կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին մասնակցության ապահովումը՝ որպես կրթության որակի բարելավման և վերջնարդյունքների ապահովման կարևոր երաշխիք: Դասավանդման ընթացքում ևս նորարարական մոտեցումների, ՏՀՏ միջոցների կիրառման անհրաժեշտությամբ պայմանավորված, մանկավարժական համակազմը մասնակցել է տարբեր մասնագիտական զարգացման ծրագրերի: Դրա արդյունքում որոշ չափով բարելավվել է ուսուցիչների գործնական հմտությունները, կիրառվող մեթոդների շտեմարանը հարստացել է նոր գործիքակազմով՝ (նախագծային, հետազոտական աշխատանքներ կատարելու, համագործակցային ուսուցման, շրջված դասարան և այլ մեթոդներ ու տեխնոլոգիաներ): Պարտադիր ատեստավորման վերապատրաստման ծրագրերի բաղադրիչներում ևս ներառված են մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկություններին վերաբերող թեմաներ, սակայն գործնական կիրառության ընթացքում ուսուցիչները դրանց օգտագործումը դեռևս չեն դասել իրենց ամենօրյա դասավանդման ընթացքում նախընտրելի մեթոդների շարքում: Որոշ

դեպքերում դրանց լիարժեք կիրառման խոչընդոտներից են կարծրատիպերի առկայությունը և կիրառման ու դասարանի կառավարման ոչ բավարար հմտությունները: Հանրակրթության պետական չափորոշիչներում և արդի դասավանդման մոտեցումներում կարևորվում են սովորողների քննադատական մտածողության զարգացման և սոցիալական հմտությունների ձևավորման անհրաժեշտությունը: Այս առումով ևս ուսուցիչները ունեն աջակցության կարիք: Նորարարական մոտեցումների ներդնումը պահանջում է մանկավարժական համակազմի վերապատրաստումների արդյունքի վերահսկման մեխանիզների բազայի ստեղծում, դրան համապատասխան դասընթացների կազմակերպում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ռեսուրսների միջոցով:

Հեռավար ուսուցման կազմակերպման անհրաժեշտությամբ պայմանավորված (արտակարգ և այլ իրավիճակներով պայմանավորված) ուսուցիչները տիրապետում են առցանց և հիբրիդային դասավանդման գործիքակազմին: Սակայն ըստ առարկաների էլեկտրոնային շտեմարանների առկայությունը ավելի դյուրին կդարձնի դասավանդման որակի բարելավման և նորարարական մոտեցումների կիրառման գործընթացները: Այս առումով գրադարանի և ընթերցասրահի պայմանների բարելավումը կնպաստի դպրոցի՝ որպես համայնքային ակտիվ դպրոցի, գործունեության իրականացման համար: Առաջիկայում նախատեսում եմ գրադարանը համալրել անհրաժեշտ ՏՀՏ և այլ նյութերով, պայմաններ ապահովել ռեսուրս կենտրոնի գործունեության համար: Ծնողական խորհրդի հետ հանդիպման ընթացքում առաջարկվեց դպրոցում կազմակերպել չինարեն և թուրքերեն լեզուների ուսուցում: Նախատեսում եմ ՀՀ ԿԳՄՍ-ի սահմանած ընթացակարգերին համապատասխան պայմաններ ապահովել այդ լեզուների ուսուցման համար՝խմբակների կամ լեզուների ուսուցման դասընթացների կազմակերպման միջոցով: Մանկավարժական խորհրդի անդամների կողմից առաջարկ ներկսայացվեց աշխատանքներ տանել մենթոր դպրոց դառնալու չափանիշներին համապատասխանելու պայմանների ապահովման ուղղությամբ:



Ռեսուրս կենտրոնի գործունեության ուղղությունները

Ծնողական համայնքի հետ համագործակցության ոլորտը ներկայացնելիս նշել էի «Ծնողավարում ակումբի» ստեղծման անհրաժեշտությունը: Նախատեսում եմ ծնողների հետ ամենօրյա կապն ապահովելու համար դպրոցի կայքէջում ավելացնել «Ծնողավարում» բաժինը, որտեղ կտեղադրվեն ուսուցման և դաստիարակության, երեխաների տարիքային հոգեբանության, հաղորդակցման առանձնահատկություններին, կոնֆլիկտների կառավարմանը և ծնողներին հետաքրքրող այլ նյութեր: Նորարարությունների ներդնումը կիրականացվի հետևյալ փուլերի հաշվառմամբ.

- ներդրման կարիքների որոշում,
- տեղեկատվության հավաքում և տվյալների վերլուծում,
- առաջնահերթություն պահանջող առաջարկների ընտրություն ,
- ներդրման որոշման ընդունում,
- նախնական փորձարկում,
- կիրառում:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
